

ՀՀ ԳԱԱ ՏԱՐԵԿԱՆ ԸՆԴՀԱՆՈՒՐ ԺՈՂՈՎՐ



Մարտի 26-ին կայացավ ՀՀ ԳԱԱ տարեկան ընդհանուր ժողովը: Ժողովը մեկնարկեց նախօրեին՝ ակադեմիայի գիտական բաժանմունքներում, ուր ամփոփվեցին բաժանմունքների տարեկան գործունեության արդյունքները, տեղի ունեցան լուրջ և շահագրգիռ քննարկումներ: Բաժանմունքներում լսվեցին բազմաթիվ գիտական զեկուցումներ:

ԳԱԱ տարեկան հաշվետու ընդհանուր ժողովը բացեց ՀՀ ԳԱԱ նախագահ, ակադեմիկոս Ռադիկ Մարտիրոսյանը և ողջունեց ընդհանուր ժողովի մասնակիցներին՝ Հայաստանի Հանրապետության վարչապետ Նիկոլ Փաշինյանին, նախարարներին, բուհերի ղեկավարներին: ԳԱԱ արտասահմանյան անդամներին, գիտնականներին և հյուրերին:

Ժողովի մասնակիցները մեկ րոպե լռությամբ հարգեցին հաշվետու տարում կյանքից հեռացած ՀՀ ԳԱԱ ակադեմիկոսներ Սերգեյ Հաբարձումյանի, Էդուարդ Խաչիկյանի, Միսակ Դավթյանի և ԳԱԱ թղթակից ան-

դամ Սարգիս Հարությունյանի հիշատակը:

Ակադեմիայի 2018 թվականի գիտական գործունեության արդյունքները ներկայացրեց ՀՀ ԳԱԱ նախագահ, ակադեմիկոս Ռադիկ Մարտիրոսյանը:

2018 թվականի ՀՀ ԳԱԱ գիտակազմակերպական գործունեության մասին զեկուցեց ԳԱԱ ակադեմիկոս-քարտուղար, ՀՀ ԳԱԱ թղթակից անդամ Հրանտ Մաթևոսյանը: Զեկուցման ավարտին, Հրանտ Մաթևոսյանը ժողովին ներկայացրեց հետևյալ առաջարկությունը.

- «Հանրապետության գիտության զարգացման գերակա ուղղությունների շրջանակում ստեղծել հետազոտական ժամանակավոր խմբեր՝ մեկ ընդհանուր գիտական հստակ խնդրի, գաղափարի շուրջ՝ ընդգրկելով տարբեր գիտական կազմակերպություններից առանձին լաբորատորիաներ, խմբեր կամ առանձին գիտնականներ (մինչև 10 գիտնական): Սկզբնական մեկնարկը տալու համար բավական է հայտարարել

մեզան տիպի 10 թեմա: Եթե այդ թեմաները կամ դրանց մի մասը կազմվեն պետական պատվերի շրջանակներում, ապա դա կլինի ավելի նպատակասլաց և ավելի շահավետ: Ծրագրի կատարման ժամանակահատվածը կարող է տատանվել 1-ից մինչև 3 տարի: Կատարողները պետք է վարձատրվեն բազային ֆինանսավորման չափաբաժիններից զոնե երկու կամ երեք անգամ ավել: Սրանք մեծ գումարներ չեն և կարող են հատկացվել թեմատիկ ֆինանսավորման շրջանակներում: Այս գործընթացում կա հույժ կարևոր հարց, դա փորձաքննությունն է. և՛ թեմաների ընտրությունը, առավել ևս կատարված աշխատանքների հաշվետվությունների ընդունումը, և՛ 2-րդ փուլի, այսինքն՝ թեմաների շարունակելու հարցի լուծումը պետք է իրականացվի հնարավորինս ամենաանաչառ փորձաքննության արդյունքում: Ցանկության դեպքում իրականացնելը շատ դյուրին է, եթե ճիշտ և հստակ լինի խնդրի դրվածքը, ճիշտ որոշվեն ոլորտը, նպատակները և չափորոշիչները: Այս ճանապարհով կորոշվեն գիտության հետագա զարգացման ուղղությունները, միտումները, գիտական համակարգերի իրական օպտիմալացման խնդիրները: Առաջին հայացքից թվում է, թե սա երկար ճանապարհ է, սակայն այս գործընթացի արագությունը հետագա տարիներին, սկսած երկրորդ փուլից, շատ արագ է մեծանալու: Արդյունքում մոտավորապես հինգ տարիների ընթացքում կծավորվի ավելի իրական գիտական համակարգ, որը մի կողմից՝ կարտահայտի տնտեսության զարգացման ուղղությունները, մյուս կողմից՝ կլուծի գոյություն ունեցող գիտական ներուժի պահպանման, կոնցենտրացման և նպատակային օգտագործման հարցը:

Զեկուցումներից հետո տեղի ունեցավ 2018 թվականի գիտակազմակերպական գործունեության արդյունքների շահագրգիռ և բովանդակալից քննարկում:

Ելույթ ունեցան ՀՀ ԳԱԱ թղթակից անդամ Պավել Ավետիսյանը, ՀՀ ԳԱԱ արտասահմանյան անդամ Արմեն Սերգենը, Հայաստանի Հանրապետության վարչապետ Նիկոլ Փաշինյանը (կարդացեք 3-րդ էջում), ՀՀ ԳԱԱ ակադեմիկոսներ Գևորգ Պողոսյանը, Յուրի Ալեքսանյանը, ՀՀ ԳԱԱ ինֆորմատիկայի և ավտոմատացման պրոբլեմների ինստիտուտի տնօրեն Հրաչյա Ասցատրյանը, Վ. Համբարձումյանի անվան Բյուրականի աստղադիտարանի տնօրեն Արեգ Միքայելյանը:

ՀՀ ԳԱԱ-Ի ՆԱԽԱԳ-ԱՀ, ԱԿԱԴԵՄԻԿՈՍ ՌԱԴԻԿ ՄԱՐՏԻՐՈՍՅԱՆԻ ՀԱՇՎԵՏՎՈՒ ԶԵԿՈՒՑՈՒՄԸ

2018 թվականը Հայաստանի Հանրապետության գիտությունների ազգային ակադեմիայի կյանքում կիշատակվի որպես գիտակազմակերպական կարևոր և մասշտաբային միջոցառումների տարի:

Դեռևս 2016 թվականին ԱՊՀ ղեկավարների խորհուրդը որոշեց ԱՊՀ երկրների գիտնականների երկրորդ ֆորումն անցկացնել Երևանում: Միջոցառման կազմակերպման պատասխանատվությունը դրվեց գիտությունների ակադեմիայի վրա: Համաժողովի քննարկումները կապված էին ԱՊՀ երկրներում գիտության զարգացման խնդիրների հետ, որոնք պետք է նպաստեին սոցիալ-տնտեսական պրոբլեմների լուծմանը: Պլենարի միատուն բոլոր պատվիրակությունների ղեկավարները ներկայացրեցին գիտության բնագավառում ձեռք բերված նվաճումների համառոտ արդյունքները: Կլոր սեղանների քննարկումները նվիրված էին ԱՊՀ երկրներում հիմնարար գիտական մշակումների ուղղությամբ կատարվող ինստիտուցիոնալ պրոցեսների ակտիվացմանը: Քննարկումներում զեկուցումներով հանդես եկան ՀՀ գիտության պետական կոմիտեի և գիտությունների ակադեմիայի ներկայացուցիչները: Գիտնականների ֆորումի օրերին ԳԱԱ-ում տեղի ունեցավ նախկին խորհրդային Միության Արևելյան Եվրոպայի և ասիական մի շարք երկրների գիտությունների ակադեմիաների ընկերակցության միատուն: Միության նախորդ միատուն ՀՀ ԳԱԱ

նախագահ Ռ.Մարտիրոսյանը ընտրվել էր միության փոխնախագահ: Ընկերակցության անդամ ընտրվեց Զինաստանի գիտությունների հզոր ակադեմիան: Քննարկվեցին համագործակցության և կադրերի պատրաստման խնդիրները:

2018թ. հանրապետության գիտական հանրությունը նշեց Հայաստանի Հանրապետության գիտությունների ակադեմիայի հիմնադրման 75-ամյակը: Ամբողջ տարվա ընթացքում համակարգի կազմակերպություններն անց են կացրել գիտական բնույթի բազմաթիվ միջոցառումներ:

Ակադեմիայի հոբելյանական միջոցառումները մեծ արձագանք ստացան միջազգային գիտական հանրության կողմից, ինչով էլ բացատրվում է մեծ թվով ակադեմիական պատվիրակությունների ժամանումը Հայաստան: Պատվիրակություններ էին ժամանել 15 տարբեր կազմակերպություններից, որոնց ներկայացուցիչներն իրենց ելույթներում և հանդիպումների ընթացքում բարձր էին գնահատում Հայաստանի գիտությունների ակադեմիայի ներդրումը համաշխարհային գիտական զանազանում:

Պատվիրակությունների անդամները նշում էին, որ անցած 75 տարիների ընթացքում Հայաստանի գիտնականները հասել են տպավորիչ արդյունքների. աստղաֆիզիկայի բնագավառում ձեռք բերված նվաճումները համաշխարհային փառք են բերել Հայաստանի գիտությանը, ֆունկցիաների տեսության և մոտավորությունների տեսության գծով հայ մաթեմատիկոսների, իսկ դեֆորմացվող պինդ մարմինների մեխանիկայի բնագավառում հայ մեխանիկների հիմնարար հետազոտությունները լայնորեն հայտնի են համաշխարհային գիտությանը: Հայաստանի ֆիզիկոսների և ռադիոֆիզիկոսների հետազոտություններն ընդգրկում են տիեզերական ճառագայթներից մինչև քվանտային էլեկտրոնիկա, մոր նյութերի ստեղծումից մինչև մեծ ճշգրտություն ունեցող սարքերի ուսումնասիրություններ, դրանք արժանացել են բարձր պարգևների և մրցանակների: Հունամիտար և հասարակական գիտությունների տարբեր բնագավառներում հիմնարար ուսումնասիրությունների շնորհիվ Հայաստանը դարձել է հայագիտական հանրաճանաչ կենտրոն ամբողջ աշխարհում:

Ակադեմիայի 75-ամյակին նվիրված հոբելյանական հանդիսավոր միատուն ALLEA-ի (Եվրոպական 58 ակադեմիաների ընկերակցության) փոխնախագահ, պրոֆեսոր Քեյ Գրահամն իր ելույթում նշեց. «Մենք համարում ենք, որ Հայաստանի Հանրապետության գիտությունների ազգային ակադեմիան արժանի է կոչվել ALLEA-ում ճանաչված և բարձրարժեք ակադեմիաներից մեկը: Այս ակադեմիան կայունության և տոկունության օրինակ է, և մենք բոլորս էլ պատրաստ ենք սովորել նրա պատմությունից և գիտական ձեռքբերումներից»:

Հաշվետու տարում տեղի են ունեցել համակարգի

2 Գիտություն

ՀՀ ԳԱՎ-Ի ՆԱԽԱԳԱՀ, ԱԿԱԴԵՄԻԿՈՍ ՌԱԴԻԿ ՄԱՐՏԻՐՈՍՅԱՆԻ ՀԱՇՎԵՏՎՈՒ ԶԵԿՈՒՑՈՒՄԸ

➤ մի շարք ինստիտուտների տնօրենների ընտրություններ: Ընդհանուր առմամբ ինստիտուտների տնօրեններ են դարձել հմուտ, բանիմաց, համրահայտ գիտնականներ, որոնցից երկուսը կանայք են: Սակայն պետք է արժանագրել՝ տնօրենների պաշտոնում բարձր որակավորում և կազմակերպական ծիրք ունեցող գիտությունն ավելի քան ընտրությունը հեշտ չի ընթացել: Պատճառը, թերևս, վերջին տասնամյակներում միջին սերնդի գիտնականների թվաքանակի շեշտակի նվազումն է: Ուստի, ամիսնաժեշտ է մշակել կադրային քաղաքականության հատուկ ծրագիր:

2018 թվականին գիտական ստորաբաժանումներում պահպանվել է հիմնա-րար հետազոտությունների գիտական բարձր մակարդակը: Այդ են վկայում արտասահմանյան հեղինակավոր գիտական ամսագրերում հրատարակված աշխատանքները՝ 953 գիտական հոդված և 22 մեծագործություն, ինչպես նաև միջազգային ծրագրերով կատարված աշխատանքները:

ԿԱՐԵՎՈՐԱԳՈՒՅՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐ

ՖԻԶԻԿԱԼՄԱԹԵՄԱՏԻԿԱԿԱՆ ԵՎ ՏԵԽՆԻԿԱԿԱՆ ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐ

- IRAS PSC/FSC կատալոգի բոլոր կետային աղբյուրներից հայտնաբերվել է 55 նոր գերլուսատու ենթակարմիր (ԵԿ) գալակտիկա (ULIRG) և ստեղծվել է ԵԿ գալակտիկաների ամենամեծ ընտրանքը:

- Կատարվել են V1318 Cyg եռուպտիվ աստղի մանրակրկիտ սպեկտրային և լուսաչափական հետազոտություններ:

- Yb:LuAlO₃ և Yb:YAlO₃ միաբյուրեղների հիման վրա մոդուլացված բարորակությամբ լազերների մշակման համար հետազոտվել է բյուրեղացման պայմանների ազդեցությունն օպտիկական բնութագրերի վրա Չոխրալսկու և Բրիջմենի եղանակներով և ստացվել են ակտիվատորի տարբեր կոնցենտրացիաներով (1.5-8 ատ%) բյուրեղներ:

- Գերբարձր հաճախությունների X տիրույթում ուսումնասիրվել են ՖՊՄՈ-ի և միկրոշերտային ալեհավաքի համակցման հատկությունները: Հետազոտվել է լայն-րեն կիրառվող փատչե տիպի տարրական ալեհավաքը, որն օժտված է G = 7 dBc ուղղորդվածության դիագրամի ուժեղացման գործակցով:

ԲՆԱԿԱՆ ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐ

- Սևանա լճի մակարդակի տատանման արդի պայմաններում ուսումնասիրվել են լճում ընթացող սուկցեսիոն երևույթները, դոմինանտ համալիրների փոփոխությունները, բացահայտվել են լիմնոհամակարգի հավասարակշռությունը խախտող հիմնական գործոնները և էկոհամակարգում ընթացող գործընթացների ուղղվածությունը:

- Կատարվել է Սևանա լճի խորջրյա հատվածների ջրաբանական, ջրաքիմիական և օդերևութաբանական ամենամյա տվյալների հավաքագրում և վերլուծությունը:

- Հաստատվել է գալարմինի հակաքաղցկեղային ազդեցությունը in vitro պայմաններում էռլիխի ասցիտային կարցինոմայով վարակված մկների քաղցկեղային բջիջների կախությանը կուլտուրայի վրա (ԱՄՆ-ի Մայամիի համալսարանի հետ համատեղ):

ՔԻՄԻԱՅԻ ԵՎ ԵՐԿՐԻ ՄԱՍԻՆ ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐ

- Մշակվել է երկրաշարժի ժամանակ ժայռային գրունտների տեղափոխությունների արագությունների և արագացումների առավելագույն մեծությունների ու գետնի վրա ճեղքվածքների առաջացման հնարավորության գնահատման եղանակ՝ կախված գրունտային ստվարաշերտի սահքի դեֆորմացիայի սահմանային, երկրաշարժի մագնիտուդի և էպիկենտրոնային հեռավորության մեծություններից:

- Որոշվել են բինար խառնուրդներում ֆլավոնոիդների հակապերօքսիդա-դիկալունի տարողությունները:

- Բացահայտվել է նոր տիպի՝ ծծմբի երկօքսիդով ջրածնի օքսիդացման շղթայական ռեակցիա, որի ընթացքում, առանց կատալիզատորների ազդեցության, ծծմբի երկօքսիդից վերականգնվում է տարրական ծծումբը, ինչը կարևոր բնապահպանական նշանակություն ունի:

ՀԱՅԱԳԻՏՈՒԹՅՈՒՆ ԵՎ ՀԱՄԱՐԱԿԱՆ ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐ

- «Թուրքիայի, Իրանի, Կովկասի և Մաշրիքի արաբական երկրների քաղաքական, սոցիալական, մշակութային և էթնիկական պատմության հիմնախնդիրները և Հայաստանը» ծրագրի շրջանակներում առաջ է քաշվել և մենագրական հետազոտության միջոցով հիմնավորվել է հայեցակարգային մի նոր մոտեցում, համաձայն որի 2011թ. արաբական երկրներում տեղի ունեցող «Արաբական գարուն» անվանվող զանգվածային ընդվզումների շարժումը ժամանակակից աշխարհում քաղաքական և տնտեսական կյանքի արդիականացման փորձի օրինակ է:

- Լեռնագոգ 1 նորահայտ հնավայրի պեղումներով և նյութերի ուսումնասիրությամբ բացահայտվել և ուսումնասիրվել է մ.թ.ա. VIII-VII հազ. ժամանակագրվող, վաղ հուլոցենի՝ նոր քարի դարի նախակերամիկական փուլի մշակույթը ներկայացնող հնագույն բնակատեղի:



- «Հայ գրականության պատմություն» թեմայի շրջանակներում մշակվել են V-XVII դդ. հայկական աղբյուրները եվրոպական երկրների մասին մատենաշարի կազմման սկզբունքները, հրատարակության է պատրաստվել Իսպանիային և Պորտուգալիային նվիրված առաջին հատորը:

- «Հայ արվեստի համալիր ուսումնասիրություն» ծրագրի շրջանակներում հայրենական արվեստագիտության մեջ առաջին անգամ իրականացվել է Օսմանյան կայսրության տարածքում համիդյան ջարդերից մինչև մեր օրերն ընկած ժամանակահատվածում հայ կերպարվեստի և կիրառական արվեստի կորուստների համակողմանի ուսումնասիրություն: Լույս է ընծայվել «Հայ կերպարվեստի և կիրառական արվեստի կորուստներն Օսմանյան կայսրության տարածքում» մենագրությունը:

ԿԻՐԱՌԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐ

ՖԻԶԻԿԱԼՄԱԹԵՄԱՏԻԿԱԿԱՆ ԵՎ ՏԵԽՆԻԿԱԿԱՆ ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐ

- Ստեղծվել է տվյալների տեսանելիացման ինտերակտիվ հարթակ, որը ներկայացվում է որպես ինտեգրված միջավայր գիտական տվյալների վերլուծման, մշակման և տեսանելիացման համար:

- Հայաստանի եղանակային տվյալների ուսումնասիրության և եղանակի կանխատեսման մոդելների ճշգրտության ստուգման համար մշակվել է ամպային ծառայություն:

- Արտոնագրվել է միջուկային ռեակցիաների գրանցման նոր եղանակ՝ հիմնված առաջացած քիմիական նյութերի տեսակի ու քանակության գրանցման վրա:

- Առաջարկվել և հետազոտվել է OFDM տեխնոլոգիայի վրա հիմնված ռադար-ների ազդանշանների թվային մշակման նոր եղանակ, որը թույլ է տալիս բազմաթիրախային իրավիճակում իրականացնել միարժեք համապատասխանություն հնարավոր հեռավորությունների և հնարավոր արագությունների բազմությունների մեջ:

ԲՆԱԿԱՆ ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐ

- Մշակվել են ՀՀ խոշորագույն քաղաքների՝ Երևան, Գյումրի, Վանաձոր և Լեռնահանքային արդյունաբերական կենտրոնների՝ Քաջարան, Կապան, փորձագիտական գումարային ալֆա, բետաակտիվության ու ռադիոնուկլիդների բաշխվածության, շրջակա միջավայրից իոնիզացիոն ճառագայթման վտանգի ու քաղցկեղածին ռիսկի փորձագիտական քարտեզներ: Վերջիններս ՀՀ ռադիացիոն անվտանգության ոլորտում վաղ ահազանգման համակարգի անհրաժեշտ տեղեկատվական հիմքն են:

- Իրականացվել է Սևանա լճի կենսառեսուրսների (ծուկ, խեցգետին) վիճակի և պաշարների գնահատում: Արդյունագործական պաշարների արդյունավետ կառավարման նպատակով ՀՀ ԲՆ են ներկայացվել իրատապ միջոցառումների առաջարկներ:

- Մշակվել է հիբրիդային ռեզոնանսային համակարգ, որը, ի տարբերություն քիմիաթերապիայի, ունի ոչ թե ընդհանուր, այլ թիրախային ազդեցություն միայն ուռուցքային բջիջների վրա:

- Մշակվել է SFCO-սենսորների նոր դաս՝ նախատեսված նոր տիպի մագնիսաչափի ստեղծման համար, որն ունակ է հայտնաբերել, զանազանել և հետազոտել չափազանց թույլ ($=1\text{pGauss}$) արտահայտված մագնիսական դաշտերի բնութագրերը:

ՔԻՄԻԱՅԻ ԵՎ ԵՐԿՐԻ ՄԱՍԻՆ ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐ

- Զգալիորեն ավելի մատչելի միկրոալիքային տաքացման եղանակով սինթեզված բորի կարբիդը բարձր միկրո-

կարծրության շնորհիվ կարող է օգտագործվել գործիքաշինության, կտրող-հղկող սկավառակներ պատրաստելու ժամանակ, ռազմական տեխնիկայի, բժշկության և այլ բնագավառներում:

- Բացահայտվել են ակտիվացման պատճառները, կատարվել է քարտեզագրում, ձևակերպվել են սողանքը կայունացնելու առաջարկություններ: Իրականացվել են ինժեներաերկրաբանական և երկրաֆիզիկական համալիր հետազոտություններ, սողանքային լամբի կայունության հաշվարկներ, առաջարկվել են ջրահեռացման տեղամասերը:

- Նախագծվել և Արագածում, Նոր Ամբերդում ներդրվել են ժամանակակից պահանջներին համապատասխանող սեյսմիկ կայաններ գլոբալ մշտադիտարկման նպատակով: Մշակվել և թուրքմենստանում ներդրվել է ջրի մակարդակի ստուգիչ-չափիչ հեռակառավարվող համակարգ:

ՀԱՅԱԳԻՏՈՒԹՅՈՒՆ ԵՎ ՀԱՄԱՐԱԿԱՆ ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐ

- Արևելագիտության ինստիտուտը պարբերաբար պատկան մարմիններին է ներկայացրել ՀՀ արտաքին քաղաքականության մի շարք հիմնական ուղղությունների մշակմանը և իրականացմանը նպաստող գիտական և գիտավերլուծական նյութեր:

- Զգալի աշխատանք է կատարվել պատմամշակութային ժառանգության պահպանման, վերականգնման, թանգարանացման ծրագրերով հուշարձանների պեղումների և դաշտային հետազոտությունների ոլորտում: Պեղվել են Դաշտադեմի ամրոցը, Մաստարայի նորահայտ ամսիկ բնակատեղին, 6 եկեղեցական համալիր, 1 ձիթան:

ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ՀԱՄԱԳՈՐԾԱԿՑՈՒԹՅՈՒՆ

Հաշվետու տարում ԳԱՍ-ն առավել աչքի է ընկել միջազգային կառույցներում միջոցառումներին իր ակտիվ մասնակցությամբ, կնքվել և վերականգնվել են մի շարք պայմանագրեր, հուշագրեր և համաձայնագրեր:

Նոյեմբերին Պեկինում (Չինաստան) տեղի է ունեցել Միջազգային գիտական կազմակերպությունների դաշինքի (ՄԳԿԴ-ANSO) ստեղծմանը նվիրված առաջին գլխավոր ասամբլեան, որի ընթացքում դաշինքի համահիմնադիրները ստորագրել են ՄԳԿԴ-ի ստեղծման համաձայնագիր, անհրաժեշտ բոլոր փաստաթղթերը: Համահիմնադիր է դարձել նաև ԳԱՍ-ն:

Մայիսին ԳԱՍ նախագահ ակադեմիկոս Ռ.Մարտիրոսյանը և ՌԴԳԱ նախագահ ակադեմիկոս Ա.Սերգեևը գիտատեխնիկական համագործակցության զարգացման նոր համաձայնագիր են ստորագրել Մոսկվայում, որը միտված է նպաստել երկու երկրների գիտական հետազոտությունների հետագա զարգացմանը, ակադեմիական համայնքների ավանդական փոխշահավետ հարաբերությունների ամրապնդմանը:

Համագործակցությունն ամրապնդելու և շարունակականությունն ապահովելու համար այս տարի ՀՀ-ում կայացած Ֆրանկոֆոնիայի զագաթաժողովի ընթացքում ԳԱՍ-ն և Ֆրանսիայի Թուլուզի դաշնային, Պոլ Սաբատիեի անվ. Թուլուզ III համալսարաններն ու Թուլուզի ազգային պոլիտեխնիկական ինստիտուտը համաձայնության արձանագրություն են ստորագրել ֆրանսիական ԲՈՒՀ-երի կողմից ԳԱՍ-ին նվիրաբերվող գերհամակարգչի վերաբերյալ: Նախատեսվում է Հայաստանում ստեղծել բարձր արտադրողականությանը հաշվարկների կենտրոն, հնարավորություն ստեղծել հայ օգտագործողների համար օգտվելու Թուլուզի համալսարանների զանազան հաստատությունների՝ բարձր արտադրողականությանը հաշվարկների փորձից:

Հունիսին ԳԱՍ և ՉԺՀ ճարտարագիտության ակադեմիայի միջև ստորագրվել է հուշագիր ճարտարագիտության և տեխնիկական գիտությունների ոլորտներում համագործակցության մասին, նախատեսվում են համատեղ հետազոտական աշխատանքներ, ուսումնական ծրագրեր:

ԳԱՍ նախագահ, ակադեմիկոս Ռ.Մարտիրոսյանը և Ալովենիայի գիտութունների և արվեստի ակադեմիայի նախագահ ակադեմիկոս Տ.Բայրը հիստեմբերին ստորագրել են համագործակցության համաձայնագիր, որով նախատեսվում է հաստատել և խորացնել գիտական համագործակցությունն ընդհանուր հետաքրքրություն ունեցող գործունեության ոլորտներում:

Միջպետական և միջգերատեսչական համագործակցություններից են տնտեսական միջկառավարական համաձայնագրերի կողմից իրականացվող հայ-լիտվական, հայ-լատվիական, հայ-թուրքմենական, հայ-հնդկական, հայ-չեխական, հայ-չինական, հայ-եգիպտական, հայ-տաջիկական համագործակցությունները: Հայ-ռուսական տնտեսական միջկառավարական համագործակցության շրջանակներում շարունակվել է Բյուրականի աստղաֆիզիկական աստղադիտարանի և ՌԴ «Ռոսկոսմոսի» հետ տիեզերական տարածության հետազոտման և խաղաղ նպատակներով օգտագործման ասպարեզում համագործակցությունը: Ըստ այդ ծրագրի՝ Բյուրականում տեղակայված ԳԿԼ-1 ռուսական դիտողական կայանի օգնությամբ իրականացվում է մերձերկրյա տարածության մշտադիտում:

ՀՀ ԳԱՎ-Ի ՆԱԽԱԳ-ԱՀ, ԱԿԱԴԵՄԻԿՈՍ ՌԱԴԻԿ ՄԱՐՏԻՐՈՍՅԱՆԻ ՀԱՇՎԵՏՎՈՒ ԶԵԿՈՒՑՈՒՄԸ

➤2 Հաշվետու տարում ԳԱՎ-ում իրականացվել են տարբեր միջազգային միջոցառումներ:

Հոկտեմբերին ԳԱՎ 75-ամյակին նվիրված հոբելյանական միջոցառումներին ներկա էին Եվրոպական երկրների ակադեմիաների ընկերակցության (ALLEA) փոխնախագահ Գ.Քեյը, ԱՊՀ երկրների ակադեմիաների պատվիրակությունները, Սլովենիայի, Չեխիայի, Չինաստանի, Մեծ Բրիտանիայի, Լատվիայի, Լիտվայի, Էստոնիայի, պատվիրակությունների ղեկավարները: Միջոցառումների շրջանակներում ԳԱՎ նախագահությունում տեղի է ունեցել Գիտությունների ակադեմիաների միջազգային ասոցիացիայի (MAAH) նիստ:

Ելնելով իր ռազմավարությունից՝ ԳԱՎ-ն ապահովում է երիտասարդ գիտնականների մասնակցությունը գիտության տարբեր ոլորտներում իրականացվող միջազգային հանդիպումներին և միջոցառումներին: ԳԱՎ-ն շարունակում է մասնակցել և իրականացնել տարբեր միջազգային գիտական ծրագրեր, այդ թվում՝ Միջազգային գիտատեխնիկական կենտրոնի (ISTC), Եվրոպական VII շրջանակային (FP7), Հորիզոն 2020, համալսարանական կրթության ՏԵՄՈՒՄ, Սևծովյան տնտեսական համագործակցության (BSEC) և այլն: ԳԱՎ կազմակերպություններն ակտիվորեն մասնակցում են նաև ԱՄՆ ծրագրերին՝ Քաղաքացիական հետազոտությունների և մշակումների (CRDF Global), ՆԱՏՕ-ի (NATO), և այլ եվրոպական ծրագրերին: Ընդհանուր առմամբ հաշվետու տարում համակարգի կառույցների՝ 42 միջազգային տարբեր ծրագրերով կատարված աշխատանքների ընդհանուր գումարը կազմել է 665 միլիոն դրամ:

ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ԳԻՏԱՏԵԽՆՈԼՈԳԻԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐ

Միջազգային գիտատեխնոլոգիական ծրագրեր բաժնի գործունեության հիմնական նպատակը շարունակել է մնալ ԳԱՎ ինստիտուտների և անհատ գիտնականների ավելի ակտիվ մասնակցությանը միջազգային գիտահետազոտական դրամաշնորհային ծրագրերին և միջազգային միջոցառումներին նպաստելը՝ հիմնական շեշտը դնելով Եվրոպական Միության հետազոտությունների և զարգացման Հորիզոն 2020 ծրագրին:

Հարկ է նշել, որ ընդհանուր առմամբ ԳԱՎ ինստիտուտների գիտնականների հետաքրքրվածությունը միջազգային և եվրոպական ծրագրերով, մասնավորապես Հ2020-ով, աճել է, ինչի մասին է վկայում պարբերաբար համալրվող շահառուների բազան, տրամադրված խորհրդատվությունների աճը և Հ2020-ին ներկայացված հայտերի քանակը:

ԳԱՎ ԱՐՏԱՍԱՀՄԱՆՅԱՆ ԱՆՂԱՄՆԵՐԻ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅՈՒՆԸ

Արտասահմանյան անդամների համագործակցությունը ԳԱՎ համակարգի և ՀՀ այլ գիտակրթական կազմակերպությունների հետ իրականացվում է մի շարք ուղղություններով՝

- համատեղ հետազոտությունների իրականացում և հետազոտական նոր ծրագրերի մշակում,
- մասնագետների պատրաստում և վերապատրաստում,
- համատեղ գիտական աշխատությունների հրատարակում,
- մասնակցություն Հայաստանում կազմակերպվող միջոցառումներին,
- մասնակցություն գիտական փորձաքննություններին:

Կիրառական բնույթի հետազոտություններում օգտագործվում են նաև արտասահմանյան անդամների լաբորատորիաների ժամանակակից սարքավորումները: Համատեղ հետազոտությունները նպաստում են Հայաստանում միջազգային չափա-միջերեմի համապատասխանող արդի ուղղությունների զարգացմանը:

Արտասահմանյան անդամներն աջակցում են երիտասարդ մասնագետների պատրաստմանը, նրանցից ոմանք ասպիրանտների գիտական ղեկավարներ և համաղեկավարներ են: Այդ ուղղությամբ հնարավորություններն ավելի շատ են, քան իրականացված ծրագրերի թիվը:

ՀՀ գիտական կազմակերպությունների գիտնականների հետ հրատարակում են գրքեր, տպագրվում են հոդվածներ միջազգային հեղինակավոր բարձր վարկանիշ ունեցող պարբերականներում կամ զեկուցվում են միջազգային գիտաժողովներում:

Հայաստանի գիտության միջազգային բարձր վարկանիշը մասամբ պայմանավորված է նշված համագործակցություններով: Արտասահմանյան անդամները զեկուցումներով և դասախոսություններով հանդես են գալիս ինչպես ԳԱՎ համակարգի ինստիտուտներում, ՀՀ բուհերում, այնպես էլ Արցախի պետական համալսարանում:

ԿԱՂԵՐ

Առ 01.01.2019թ. ԳԱՎ կազմում ընդգրկված են 46 ակադեմիկոս, 56 թղթակից և 123 արտասահմանյան անդամներ: 22 ակադեմիկոս և 26 թղթակից անդամ աշխատում են ԳԱՎ համակարգից դուրս:

Վերջին անգամ ԳԱՎ ակադեմիկոսների և թղթակից ան-

դամների ընտրություններ տեղի են ունեցել 2014թ. դեկտեմբերին:

Առ 01.01.2019թ. ԳԱՎ համակարգում աշխատում է 3585 մարդ, որոնցից 2206-ը գիտական աշխատողներ են՝ 326-ը գիտության դոկտորներ, 1029-ը գիտության թեկնածուներ, 851-ը գիտական աշխատողներ առանց գիտական աստիճանի: Հաշվետու տարում ԳԱՎ համակարգում աշխատանքի է ընդունվել 101 երիտասարդ մասնագետ:

2018թ. ԳԱՎ-ում պաշտպանվել է 48 թեկնածուական ատենախոսություն (32 ասպիրանտ, 14 հայցորդ և 2 արտերկրացի ասպիրանտ):

ԳԻՏԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ՖԻՆԱՆՍԱՎՈՐՈՒՄ

Գիտական աշխատանքների տարեկան ֆինանսավորումը պետական բյուջեից 2018թ. կազմել է 6 միլիարդ դրամ: Հատկացված ֆինանսավորման 70 տոկոսն աշխատավարձի բաժինն է: Համակարգի աշխատողների ամսական միջին աշխատավարձը մեկ մարդու հաշվով, առանց արտաբյուջետային միջոցների, նախորդ տարվա համեմատ գրեթե չի փոփոխվել: Արտաբյուջետային ֆինանսավորումը հաշվետու տարում կազմել է 2,2 միլիարդ դրամ, որը 200 միլիոն դրամով ավել է նախորդ տարվա ցուցանիշից: Արտաբյուջետային միջոցների 655 միլիոն դրամը համակարգի աշխատողները ստացել են մոտ 43 մեծ ու փոքր դրամաշնորհային ծրագրերից: Ծրագրերից բացի, կատարվել են նաև պայմանագրային աշխատանքներով մատուցված մեծ ծավալի տարաբնույթ ծառայություններ: Այս ուղղությամբ ակտիվ աշխատանքներ են տանում «Հայկենսատեխնոլոգիա» գիտաարտադրական կենտրոնը, Ռադիոֆիզիկայի և էլեկտրոնիկայի, Հնագիտության և ազգագրության ինստիտուտները, Օրգանական և դեղագործական քիմիայի կենտրոնը, Փորձաքննությունների ազգային բյուրոն, Գիտակրթական միջազգային կենտրոնը: Բյուրականի աստղադիտարանի կիրառական հետազոտությունների կենտրոնում իրականացվել են տիեզերական հետազոտությունների հետ կապված պայմանագրային աշխատանքներ, որոնց ծավալն առաջիկայում կավելանա և աստղադիտարանը կհամալրվի նոր գիտական սարքավորումներով:

Ռադիոֆիզիկայի և էլեկտրոնիկայի ինստիտուտը տարեցտարի մեծացնում է պայմանագրային աշխատանքների ծավալը երկրի ռազմաարդյունաբերական համալիրի պատվերներով: Ինստիտուտում ստեղծված համակարգերը պաշտպանության նախարարությունը ներկայացրել է միջազգային մի քանի ցուցահանդեսներում, որտեղ դրանք արժանացել են մեծ ուշադրության: Այժմ ինստիտուտը պատվերներ է ստացել արտասահմանյան երկրների պաշտպանական գերատեսչություններից:

Արտաբյուջետային միջոցների աղբյուր կարող է հանդիսանալ ինստիտուտներում փոքրածավալ արտադրությունների կազմակերպումը, ինչը պահանջում է որոշ ծավալի ներդրումներ: Արտադրական փոքր ծավալի միավորներ են ստեղծվել «Հայկենսատեխնոլոգիա» գիտաարտադրական, օրգանական և դեղագործական քիմիայի գիտատեխնոլոգիական կենտրոններում, ռադիոֆիզիկայի և էլեկտրոնիկայի, Քիմիական ֆիզիկայի ինստիտուտներում:

ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ԽՆԴԻՐՆԵՐ

Հաշվետու տարում համակարգի աշխատողների սոցիալական բնույթի հարցերը եղել են ԳԱՎ նախագահության ուշադրության կենտրոնում: Ցավոք, 2018թ. այս բնագավառում շոշափելի դրական արդյունքներ չեն արձանագրվել: Ուշադրության կենտրոնում է եղել սոցիալական փաթեթի ցուցակներում աշխատողների ժամանակին ներգրավվածությունը: Արդեն երրորդ տարին է՝ համակարգի աշխատողները օգտվում են երկարացված արձակուրդից: Հուսով ենք, որ այս տարի կսկսվի բնակելի նոր շենքի շինարարությունը, որի սկիզբն անընդհատ երկարաձգվել է տարբեր պատճառներով:

Համակարգի աշխատողների միջին ամսական աշխատավարձը բյուջետային մուտքերից, որի մեջ հաշվի են առնված բոլոր տիպի մուտքերը, կազմել է 100 հազար դրամ:

Սոցիալական բնույթի բազմակողմանի գործունեություն է ցուցաբերել ակադեմիայի «Գիտության զարգացման հիմնադրամը»:

Սոցիալական բնույթի խնդիրներից է աշխատանքային պայմանների բարելավման հարցը: Կարևոր է համակարգի անշարժ գույքի շահագործման և պահպանման հարցը: Նորից ուզում են հիշեցնել, որ ամբողջ անշարժ գույքը գտնվում է Պետական գույքի վարչության հաշվեկշռում, սակայն նշված ծախսերի համար ոչ մի դրամ չի հատկացվում: Ոչ մի աջակցություն ինստիտուտները չեն ստացել մույնիսկ բնական աղետների հետևանքով ստեղծված արտակարգ վիճակների դեպքում:

ԳԱՎ համակարգի գիտական հենքը կապված է ժամանակակից սարքավորումների և տեխնոլոգիաների հետ, որոնք գտնվում են վատթար վիճակում, իսկ դրանց արդիականացումը կապված է լրացուցիչ, մեծածավալ ֆինանսական ներդրումների հետ: Շուտով քիմիայի և ֆիզիկայի

բնագավառներում կատարվող հետազոտությունների հենքը կհամալրվի ժամանակակից մագնիսական ռեզոնանսի սպեկտրոմետրով, որը հնարավոր եղավ ձեռք բերել մի տասնամյակի ընթացքում կուտակված միջոցներով:

Ընդհանուր ժողովի հարգելի մասնակիցներ նախորդ տարվա հաշվետու ժողովի հաշվետվության եզրափակիչ մասում Ձեր ուշադրությանն էի ներկայացրել 2012-2016 թվականների համակարգի կազմակերպությունների գործունեության արդյունավետության գնահատման համար արդյունքները: Ստացված գնահատումների վերաբերյալ կատարվել են քննարկումներ բաժանմունքներում և ինստիտուտների գիտական խորհուրդներում: Քննարկումների արդյունքներով կազմվել են միջոցառումների պլանը: 2018թ. ընթացքում իրականացվել են ՀՀ ԳԱՎ համակարգի գիտական կազմակերպությունների 2012-2016 թթ.-ի գործունեության արդյունավետության գնահատման արդյունքների հիման վրա իրականացված միջոցառումներ տարբեր ուղղություններով:

■ Գիտական ուղղությունների ճշգրտում և կառուցվածքի օպտիմալացում

ՀՀ ԳԱՎ համակարգում (նաև ի հաշիվ գնահատման միջոցառումների) տեղի է ունեցել 2016թ. համեմատությամբ ընդհանուր համակարգի աշխատակիցների թվի նվազեցում մինչև 456-ի, իսկ գիտական աշխատակիցների թվի նվազեցում՝ մինչև 340-ի: Կատարվել են ինստիտուտների կառուցվածքների բարելավումներ: Նպատակ ունենալով հստակեցնել առանցքային գիտական ուղղությունները՝ որոշ ինստիտուտներում կատարվել են լաբորատորիաների կրճատումներ, իսկ մյուսներում ստեղծվել են նոր աշխատանքային խմբեր:

Գիտական կազմակերպության կադրային ներուժը Որոշ ինստիտուտներում երիտասարդ հեռանկարային գիտաշխատողների աշխատանքի խթանման և արդյունավետության բարձրացման համար ստեղծվել են աջակցության ֆոնդեր արտաբյուջետային միջոցների հաշվին:

(Երկրաբանական գիտությունների ինստիտուտ (ԵԳԻ), Երկրաֆիզիկայի և ինժեներային սեյսմաբանության ինստիտուտ (ԵՖԻՍԻ))

■ Հետազոտությունների և մշակումների արդյունքների առևտրայնացում

Պայմանագրեր են կնքվում Շվեյցարական ,Ֆիլիպ Մորիս ֆիրմայի հետ (ՕԴՔԿ, ՖՀԻ): Կատարվում են ինովացիոն ծրագրեր արտաբյուջետային միջոցառումների հաշվին (,Նարինե կաթնաթթվային մթերքների և մի շարք բուսական յուղերի արտադրություններ ,Հայկենսատեխնոլոգիան ԳԱԿ-ում): ԻԱՊԻ-ի կողմից տեղեկատվական ոլորտում համագործակցություն է հաստատվել տեղական ձեռնարկությունների հետ՝ ,Սիմենս (,Մեմտոր Գրաֆիկս), ,Պիքսարտ և ,Բժշկական գենետիկայի կենտրոնն միջազգային և տեղական գիտատեխնիկական մրցույթներին մասնակցության ակտիվացման նպատակով: 2018թ. Մաթեմատիկայի ինստիտուտը կազմակերպել է միջազգային գիտաժողով, ձեռք է բերվել նախնական համաձայնություն Եվրոպական մաթեմատիկական ընկերության խորհրդի նիստը Երևանում կազմակերպելու նպատակով:

■ Գիտական կազմակերպությունների ենթակառուցվածքների և գիտական ուղղությունների ռեսուրսային ապահովվածություն

ՀՀ ԳԱՎ ֆինանսավորմամբ ՀՀ բոլոր գիտական հաստատությունների քիմիկոսների, կենսաքիմիկոսների և այլ բնագավառների հետազոտողների համար ձեռք է բերվել ,Բրուկներ ֆիրմայի 400Մից հզորությամբ ժամանակակից միջուկային մագնիսական ռեզոնանսի (ՄՄՐ) սպեկտրումներ:

ՀՀ ԳԿ կողմից ֆինանսավորմամբ ձեռք է բերվել ֆլուորեսցենտային կենսաբանական տրինոկուլյար մանրադիտակ:

ՀՀ ԳԱՎ համաֆինանսավորմամբ նախապատրաստվել է Թուլուզի երեք համալսարանների կողմից ՀՀ ԳԱՎ նվիրատվությունը EOS սուպերկոմպյուտերի հիման վրա հայկական սուպերկոմպյուտերային կենտրոնի ստեղծման համատեղ նախագիծ:

■ Միջգիտակարգային ծրագրերի առաջարկություններ

Գնահատման արդյունքում ՀՀ ԳԱՎ ինստիտուտները նախատեսել են քննարկել գիտական կառուցվածքի օպտիմալացման սկզբունքները՝ ելնելով աշխատանքի արդյունավետության բարձրացման և առկա գիտական ներուժի առավել նպատակահարմար օգտագործման նկատառումներից, ինչպես նաև թեմաների ղեկավարների տարիքային սահմանափակման պահանջներից:

Ելնելով ինստիտուտների կառուցվածքային օպտիմալացման անհրաժեշտությունից՝ ինստիտուտները նախաձեռնել են միջգիտակարգային 26 ծրագրերի վերաբերյալ առաջարկություններ՝ հիմնվելով ինստիտուտների ռեսուրսների և գիտական ինֆրակառուցվածքի միավորման վրա:

ՀՀ ԳԱՎ նախագահ, ակադեմիկոս Ռադիկ Մարտիրոսյանի հաշվետու զեկուցումն հրապարակվում է մասնակի կրճատումներով:

«ՎԱՐՉԱՊԵՏ ՆԻԿՈՒ ՓԱՇԻՆՅԱՆԻ ԵԼՈՒՅԹԸ

Իր ելույթում վարչապետ Փաշինյանը ողջունեց ներկայից և նշեց, որ Հայաստանի գիտությունների ազգային ակադեմիան հարուստ պատմություն ունի, որի շենքում հայկական և համաշխարհային գիտության փառապանծ էջեր են գրվել: «Իմ միջազգային հանդիպումներին, հատկապես նրանց, որ որոշակի առնչություն ունեն գիտության և գիտական գործունեության հետ, ես պարտադիր շեշտում եմ, որ Հայաստանը, կարող ենք ասել վստահաբար, եղել է հորինողային Միության Սիլիկոնային հովիտը: Եվ սա ասում եմ ոչ թե ուղղակի պատմական հիշողությունը վերականգնելու, այլ ընդգծելու համար այն մեծ ներուժը, որ, իմ համոզմամբ, ունի Հայաստանը՝ որպես գիտական պոտենցիալ երկիր: Ինչո՞ւ էր հորինողային Միությունում գիտությունն այդքան ուժեղ և հզոր: Կարծում եմ՝ այն պատճառով, որ պետությունը և հանրությունը գիտեին, թե ինչ են ուզում գիտությունից, գիտությունն էլ շատ հստակ գիտեր, թե ինչ է ուզում պետությունից և հանրությունից»,- ասել է վարչապետը: Կառավարության ղեկավարի խոսքով՝ երրորդ հանրապետության ստեղծման առաջին օրից տեղի է ունենում այն բանավեճը, թե ինչ է ուզում պետությունը գիտությունից, ինչ է ուզում գիտությունը պետությունից, և ինչ կարող են դրանք ընդհանրապես տալ իրար: Այս հարցերի պատասխանը գտնելը, վարչապետի կարծիքով, կլինի այն առաջին կարևոր կետը, որի վրա պետք է հիմնվի մեր գիտության հետագա զարգացումը:

«Ես կարող եմ ասել, թե ինչ է ուզում պետությունը կամ կառավարությունը գիտությունից: Մենք հայտարարել ենք, որ Հայաստանի Հանրապետությունը տեսնում ենք որպես տեխնոլոգիական երկիր և հույս ունենք, որ Հայաստանում գիտությունը, գիտական պոտենցիալը, այդ թվում՝ գիտությունների ազգային ակադեմիան ողջ թափով կսպասարկեն բաղադրական այս տեսլականը:

Շատ է խոսվում գիտության ֆինանսավորման և դրա մեխանիզմների մասին, և կանխավարկածն այնպիսին է, որ ֆինանսների բացակայության կամ սղության պատճառով ինչ-որ բան չի ֆինանսավորվում, ինչ-որ բան պակաս է ֆինանսավորվում, ինչ-որ բան այնպես չէ ֆինանսավորվում, ինչպես պետք է ֆինանսավորվի: Բայց ցանկանում եմ ասել, որ կառավարությունում մեր աշխատանքի ընթացքում ես առաջարկել եմ ընդհանրապես հրաժարվել փողի մասին խոսակցությունից, որովհետև եթե որևէ խոսակցություն սկսում ենք փողից, շատ արագ մտնում ենք փակուղի: Պետք է խոսել ոչ թե այն մասին, թե ինչքան փող կա, և մենք ինչքան ենք պատրաստ հատկացնել, այլ այն մասին, թե մենք ինչ խնդիր ենք լուծում, ինչպես ենք պատկերացնում դրա լուծումը և արդյոք կարող ենք լուծել այն: Եթե չենք կարող, ի՞նչ քայլեր պետք է ձեռնարկենք այդ խնդրի լուծման համար: Հետ-



համակարգից, այսինքն՝ մեր կրթական համակարգում հետազոտական բաղադրիչի էական պակաս ունենք:

Մեր ռազմավարությունը լինելու է այդպիսին՝ մենք փորձելու ենք հնարավորինս շատ և հնարավորինս արդյունավետ հետազոտական, այսինքն՝ գիտական ուղղությունն ինտեգրել բարձրագույն կրթական ուղղությանը: Այս առումով ցանկանում եմ ընդգծել նաև, որ մեր պատկերացումը հետևյալն է. որոշակի գործառույթներ, որոնք ավանդաբար ընկալված են որպես կառավարական գործառույթներ, պետք է պատվիրակենք բուհական, գիտակրթական համակարգին, որը հնարավորություն կտա նախ գիտնականներին ավելի ինտեգրված լինել տնտեսության և հանրային կյանքի կառավարման մեջ և նույն հնարավորությունը կստեղծի նաև ուսանողների համար՝ ստանալու ոչ միայն տեսական գիտելիքներ, այլև փորձելու այդ տեսական գիտելիքները կիրառել գործնականում:

Հաջորդ կարևոր հարցը, որ մեր կառավարությունն առաջ է քաշում, հետևյալն է. ինչքանով է Հայաստանի գիտական կամ գիտակրթական համակարգն ինտեգրված Հայաստանում ռազմավարական հեռանկարի ձևակերպման և ձևավորման գործընթացում:

Մեր մեծագույն խնդիրներից մեկն այն է, որ կառավարությունը գործում է առանձին, իսկ գիտակրթական համակարգը և մեր ուժերը՝ առանձին: Մենք խնդիր ենք դրել, որ Հայաստանում էականորեն պետք է ուժեղացվի փորձագիտական ներուժը, և դա պետք է արվի հետևյալ կերպ. գիտակրթական համակարգը պետք է ներգրավված լինի ռազմավարությունների և բաղադրականությունների ձևավորման գործընթացում, ինչն իր հերթին նաև ենթադրում է, որ որոշակի ֆինանսական հոսքեր կուղղվեն նաև գիտակրթական համակարգ:

Հաջորդ հարցը՝ ինչքանով է մեր գիտակրթական համակարգն ինտեգրված տնտեսությանը: Ես շատ ուրախ եմ, որ այդ հարցի պատասխանը կամ մտածողության այդ վեկտորը շատ հստակ տեսա-

հնագիտության և ազգագրության ինստիտուտի տնօրեն Պավել Ավետիսյանի խոսքում, երբ նա խոսում էր հնագիտության և ազգագրության ասպարեզում գիտական գործունեության մասին, բայց հաջորդ նախադասությամբ ասաց, որ սա կարող է նպաստել և դառնալ զբոսաշրջության զարգացման կարևոր գործիք: Շատ կարևոր է, որ մենք գիտությունը և գիտական գործունեությունը ընկալենք հենց այս տեսակետից: Դա մի արդյունք է, որը պետք է ունենանք, բարձր գնահատենք, դրանով հպարտանանք և պահենք դարակներում: Դա պետք է հասանելի լինի մարդկանց: Մասնավորապես 21-րդ դարի մարդը և՛ գիտության, և՛ բազմաթիվ այլ ոլորտներում ունի առօրեական հետաքրքրություններ: Այսօր մարդը ձգտում է իմանալ ավելին, ավելի մասին է ձգտում տեղեկանալ, և կարծում եմ, որ մեր գիտակրթական համակարգի հաջորդ խնդիրը պետք է լինի տնտեսությանն ինտեգրվելը: Երբ ասում ենք տնտեսությանն ինտեգրվել, շատ դեպքերում հասկանում են միայն տեխնիկական գիտությունները, բայց նշված օրինակը կարծում եմ՝ ցույց տվեց, որ ոչ միայն տեխնիկական գիտություններն են, որ կարող են ինտեգրվել տնտեսությանը և սպասարկել կամ առաջ մղել տնտեսության կոնկրետ ճյուղեր:

Հաջորդ կարևորագույն խնդիրն այն է, թե ինչքանով

է մեր գիտակրթական համակարգն ինտեգրված մեր զինված ուժերին և մեր բանակին և ինչքանով է նպաստում մեր անվտանգության կարիքների սպասարկմանը: Եվ ևս մի կարևոր հարց, որը ցանկանում եմ ընդգծել, հետևյալն է. իսկ ինչքանով է մեր գիտակրթական համակարգն ինտեգրված կամ ինչքանով է աշխատում ինքնաճանաչման կարևոր հրամայականի վրա: Մեր ռազմավարական ապագան կառուցելու համար շատ կարևոր է, որ մենք այսօր առավել ճիշտ և առավել ընդգրկուն ճանաչենք ինքներս մեզ՝ որպես ինքնություն, ազգություն, հանրություն, ժողովուրդ, քաղաքացի, որովհետև ինքնաճանաչողությունն ապագայի ռազմավարությունը կառուցելու կարևորագույն նախապայման է»,- ընդգծել է Նիկոլ Փաշինյանը:

Վարչապետը նշել է, որ այս թեմաները քննարկվել են ԳԱԱ ներկայացուցիչների, կրթության և գիտության նախարարի և նախարարության հետ. դրանք լինելու են կառավարության առաջիկա գործունեության հիմնական ուղղությունները, և գործադիրն այս շրջանակում է պատկերացնում համագործակցությունը ԳԱԱ և ընդհանրապես գիտակրթական համակարգի հետ:

Կառավարության ղեկավարը ևս մեկ անգամ անդրադարձել է գիտության ֆինանսավորման հարցին և ընդգծել, որ ֆինանսավորման փիլիսոփայության մեջ կարևոր ու սկզբունքային փոփոխություններ պետք է տեղի ունենան, որովհետև հարցն այն չէ, թե ինչքան գումար կա և ինչպես այն բաժանել արդարացի: «Այսօր արդեն կառավարությունը հենց գիտության ոլորտում ունի կոնկրետ ծրագրային առաջարկներ, և երբ այդ ծրագրային առաջարկները քննարկվում էին, դրանց ֆինանսավորման համար առկա գումարի թիվը զրո էր, այսինքն՝ այդ ծրագրի ֆինանսավորման համար ընդհանրապես ոչ մի կոպեկ, ոչ մի լուսնա գումար չկա: Եվ ինչքան համոզիչ են ծրագրի հեղինակները ներկայացնում իրենց ծրագրի կարևորությունը, այն, որ դա ռազմավարական նշանակության և օգտավետ ծրագիր է, փողն ինքն իրեն հայտնվում է: Համոզված կարող եմ ասել, որ չեմ պատկերացնում մի այնպիսի գիտական համոզիչ ծրագիր, որն ինքն իրենով կապացուցի, որ և՛ ծրագրի հաջողության, և՛ նույնիսկ անհաջողության դեպքում Հայաստանի գիտությունը և Հայաստանի Հանրապետությունը չափելու են, չեմ պատկերացնում այդպիսի մի իրավիճակ, որ ՀՀ կառավարությունը գումար չգտնի այդպիսի ծրագրի համար: Ես չեմ պատկերացնում այդպիսի իրավիճակ, որ նոր Հայաստանում, այսօրվա Հայաստանում իմ նշած չափանիշներին համապատասխանող որևէ ծրագիր չիրականացվի միայն այն պատճառով, որ փող չկա: Ի վերջո, փողն ստեղծվում է նաև մարդկանց գործունեության, մտքի, գաղափարի, եռանդի, աշխատանքի արդյունքում, և ուրեմն, փող կա՞, թե՞ չկա հարցին ի պատասխան՝ մենք պետք է ասենք՝ ինչքան եռանդ մենք ունենք, ինչքան ուժեղ է մեր միտքը, ինչքան ուժեղ է մեր կամքը, և ինչքանով մենք համոզված ենք, որ այն, ինչ անում ենք, արժե շատ ավելին, քան փողը:

Համոզված եմ, որ Հայաստանի Հանրապետությունում կա անհրաժեշտ գիտական, մարդկային ներուժ, անհրաժեշտ մտավոր և բարոյական ներուժ, որպեսզի մենք ամեն օր ստեղծենք այնպիսի արդյունքներ, որոնք շատ ավելին են, քան փողը: Այդ արդյունքներն իրենց հետևից կբերեն անսահմանափակ քանակությամբ փող, որովհետև փողն ամենակին էլ առաջնային է, հաղթում է և պիտի հաղթի»,- ելույթը եզրափակեց Նիկոլ Փաշինյանը:

Տարեկան ընդհանուր ժողովին մասնակցում էր ՀՀ կրթության և գիտության նախարար Արայիկ Հարությունյանը: Ելույթ ունենալով, նա մասնավորապես նշեց.

«Առաջինը, որի վրա պետք է միասին աշխատենք, «Բարձրագույն կրթության և գիտահետազոտական գործունեության մասին» օրենքի նախագիծն է: Արձանագրել ենք, որ հիմնականում գիտահետազոտությունը դուրս է բուհական համակարգից կամ բավարար մակարդակի չէ, և դրա համար ունենք լուծումներ: Մեզ շատ հաճախ ասում են, որ առայժմ կրթության և գիտության զարգացման ռազմավարությունը չեք ներկայացնում: Մենք մեզ համար խնդիր ենք դրել դաշտի բոլոր խաղացողներին ճանաչել, որպեսզի ռազմավարությունն իրական կյանքի հետ առնչություն ունենա: Մենք շատ ենք ուզում, որ այն բոլոր փաստաթղթերը, որ մենք կներկայացնենք, լինեն կենսունակ:

Գիտությունը նաև պետք է սպասարկի մեր տնտեսությունը, և այդ ուղղությամբ էլ պետք է աշխատանք տանենք»:

Ժողովի ավարտին ներկայացրել են ուշադրությանը և ուղեկցողներին ՀՀ ԳԱԱ թղթակից անդամ Ռուբեն Հարությունյանի անչափ ուշագրավ «Հայ ժողովրդի գեներալական» գիտական զեկուցումը:



ևաբար, ես առաջարկում եմ, որ ընդհանրապես այդ տրամաբանությունից դուրս գանք, որովհետև հարցն այն չէ՝ փող կա՞, թե՞ չկա, այլ այն, թե ինչ ենք ուզում: Երբ հստակ ձեւակերպենք մեր ցանկությունները և անելիքը, կարծում եմ՝ փող միշտ էլ կգտնվի, որովհետև նպատակները շատ ավելի կարևոր են, քան մտնել հաշվելը, թե այս պահին ինչքան փող ունենք»,- նշել է Նիկոլ Փաշինյանը:

Երկրի վարչապետն անդրադարձել է ՀՀ-ում գիտության ոլորտի զարգացման հետ կապված մի շարք հարցերի, որոնց վրա պետք է ուշադրություն դարձնել: «Առաջին հարցը՝ ինչքանով է գիտությունն ինտեգրված կրթությանը և մասնավորապես, բարձրագույն կրթությանը: Վերջին շրջանի բոլոր այցերին այնպես ենք դասավորում, որ պարտադիր փորձում ենք այցելել եվրոպական կամ աշխարհի առաջատար կրթական հաստատություններ: Այդ այցերի, շփումների արդյունքում իմ եզրակացությունն այն է, որ ժամանակակից աշխարհում միտումները գնում են միանշանակորեն այն ուղղությամբ, որ կրթությունն անհնար է պատկերացնել առանց շատ ուժեղ հետազոտական, այսինքն՝ գիտական բաղադրիչի: Ցավոք, մեր այսօրվա գիտական համակարգը որոշակիորեն, ոչ ամբողջությամբ կտրված է բուհական

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՆԱԽԱԳԱԾԻ ԸՐԱՄԱՆԱԳԻՐԸ

Դ. Մ. ՍԵՂՈՒՅԱՆԻ «ՀԱՅՐԵՆԻՔԻՆ»
ՄԱՏՈՒՑԱԾ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՀԱՄԱՐ»
1-ԻՆ ԱՍՏԻՃԱՆԻ ՄԵՂԱԼՈՎ
ՊԱՐԳԵՎԱՏՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով վարչապետի միջնորդությունը՝ համաձայն Սահմանադրության 136-րդ հոդվածի, ինչպես նաև «Հայաստանի Հանրապետության պետական պարգևների և պատվավոր կոչումների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 5.3-րդ հոդվածի 1-ին մասի և 18-րդ հոդվածի.

Գիտության ասպարեզում ներդրած ավանդի համար Դավիթ Միտրի ՍԵՂՈՒՅԱՆԻՆ պարգևատրել «Հայրենիքին մատուցած ծառայությունների համար» 1-ին աստիճանի մեդալով:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՆԱԽԱԳԱԾ
Ա. ՍԱՐԳՍՅԱՆ

2019թ. փետրվարի 27

ՀՀ ԳԱԱ-ում ԿԵՂԻ ՈՒՆԵՑԱԾ ԱՇԽԱՏԱՆՔԱՅԻՆ ԽԱՆՈՒԿՈՒՄ «ՀԱՅԿԱՆ ԳԵՆՈՒՄ» ՆԱԽԱԳԾԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

Փետրվարի 26-ին ՀՀ գիտությունների ազգային ակադեմիայում տեղի ունեցավ աշխատանքային խանութի և «Հայկական գենոմ» նախագծի վերաբերյալ: Հանդիպմանը մասնակցեցին ՀՀ ԳԱԱ գիտական կազմակերպությունների, ՀՀ առողջապահության նախարարության, բժշկական հաստատությունների, բուհերի, բարեգործական հիմնադրամների ներկայացուցիչներ:

Նախագծի քննարկումը կազմակերպվել էր ՀՀ ԳԱԱ բնական գիտությունների բաժանմունքի կողմից:

ՀՀ առողջապահության նախարարությունը և ՀՀ ԳԱԱ մոլեկուլային կենսաբանության ինստիտուտը պետք է համատեղ մշակեն «Հայկական գենոմ» նախագծի մանրամասն ռազմավարություն, ճանապարհային

քարտեզ և բյուջեի ժամանակացույց, աշխատեն պոտենցիալ հետաքրքրություն ունեցող անձանց շրջանակի հստակեցման և ներդրողների ներգրավման ուղղությամբ:

Հանդիպման ընթացքում «Հայկական գենոմ» նախագիծը ներկայացրեց ՀՀ ԳԱԱ մոլեկուլային կենսաբանության ինստիտուտի տնօրեն Արսեն Առաքելյանը: Հայկական գենոմն նախագիծն ուղղված է մեր երկրում գենոմիկայի ոլորտի զարգացմանը, ինչը դրական ազդեցություն կունենա ՀՀ ԳԱԱ բնական գիտությունների բաժանմունքի ինստիտուտների հետազոտական հնարավորությունների ընդլայնման, կիրառական գիտության և հանրային առողջապահության արդյունավետ քաղաքականության մշակման համար:

«Սույն նախագծով Հայաստանը հնարավորություն է ստանում համալրել գենոմի վերծանման մասնօրինակ ազգային նախաձեռնությունների շարքը, որոնք արդեն իսկ մեկնարկել են աշխարհի տարբեր երկրներում՝ ԱՄՆ-ում, Մեծ Բրիտանիայում, Ռուսաստանում, Եստոնիայում, Թուրքիայում»,- ասաց ՀՀ ԳԱԱ բնական գիտությունների բաժանմունքի ակադեմիկոս-քարտուղար Ռուբեն Հարությունյանը:

Հանդիպման մասնակիցները կարևորեցին նախագծի իրականացումը և պատրաստակամությունը հայտնեցին համագործակցել նախագծի շրջանակներում:

ՀՀ ԳԱԱ տեղեկատվական-վերլուծական ծառայություն

ՀՀ ԳԱԱ Շիրակի հայագիտական հետազոտությունների կենտրոնի տնօրենի պաշտոնում ընտրվեց Արմեն Հայրապետյանը



Սույն թվականի փետրվարի 20-ին ՀՀ ԳԱԱ նախագահությունը ՀՀ ԳԱԱ Շիրակի հայագիտական հետազոտությունների կենտրոնի տնօրենի պաշտոնում միաձայն ընտրեց պատմական գիտությունների թեկնածու, դոցենտ Արմեն Հայրապետյանին:

Արմեն Հայրապետյանը ծնվել է 1978 թ.-ին՝ Գյումրիում: 2000թ.-ին ավարտել է Գյումրու մանկավարժական ինստիտուտի պատմաբանասիրական ֆակուլտետի պատմության բաժինը: 2003 թ.-ին նույն ինստիտուտում պաշտպանել է թեկնածուական ատենախոսությունը:

Արմեն Հայրապետյանի գիտական հետազոտությունների ոլորտն ընդգրկում է Հայոց պատմության մեր շրջանը:

Արմեն Հայրապետյանը 2 մեմբրության, 1 մեթոդական ժողովածուի, 54 հոդվածի հեղինակ է: Մինչ այժմ ՀՀ ԳԱԱ Շիրակի հայագիտական հետազոտությունների կենտրոնի ավագ գիտաշխատող էր:

ՀՀ ԳԱԱ տեղեկատվական-վերլուծական ծառայություն

ՀՀ ԳԱԱ ՀՀ ԳԱԱ արվեստի ինստիտուտի տնօրենի պաշտոնում վերընտրվեց Արարատ Աղասյանը

ՀՀ ԳԱԱ նախագահությունը սույն թվականի մարտի 6-ի նիստում ՀՀ ԳԱԱ արվեստի ինստիտուտի տնօրենի պաշտոնում վերընտրեց ԳԱԱ թղթակից անդամ Արարատ Աղասյանին:

Արարատ Աղասյանը ծնվել է 1956 թվականին՝ Սիսիանում: 1978 թ.-ին ավարտել է Մոսկվայի Միխայիլ Լոմոնոսովի անվան պետական համալսարանի պատմության ֆակուլտետի արվեստաբանական բաժինը: 2014 թ.-ին ընտրվել է ՀՀ ԳԱԱ թղթակից անդամ: Արարատ Աղասյանի հետազոտությունների ոլորտն ընդգրկում է XIX-XX դարերի հայ կերպարվեստի և քննադատական մտքի պատմությունը: Նա 15 մեմբրության, 121 գիտական հոդվածի հեղինակ է, ՀՀ ԳԱԱ արվեստի ինստիտուտում աշխատում է 1978 թ.-ից: Ինստիտուտի տնօրենի պաշտոնը զբաղեցնում է 2003 թ.-ից:

Արարատ Աղասյանը ՀՀ ԳԱԱ գիտահրատարակչական խորհրդի, ՀՀ ԳԱԱ փորձաքննությունների ազգային բյուրոյի, Հայաստանի ազգային պատկերասրահի, Երևանի գեղարվեստի պետական ակադեմիայի, Հայաստանի ժողովրդական արվեստի, Երևանի Ռուսական արվեստի, Մարտիրոս Սարյանի և Երվանդ Քոչարի թանգարանների գիտական խորհուրդների անդամ է:

Արարատ Աղասյանը 2008 թ.-ին արժանացել է ՀՀ արվեստի վաստակավոր գործչի կոչման, ՀՀ կրթության և գիտության նախարարության, ՀՀ մշակույթի նախարարության Ոսկե մեդալների, 2012 թ.-ին՝ ՀՀ պաշտպանության նախարարության «Գարեգին Նժդեհ» մեդալի:

ՀՀ ԳԱԱ տեղեկատվական-վերլուծական ծառայություն



ՀՀ ԳԱԱ Մ. Մանվելյանի անվան ընդհանուր և անօրգանական քիմիայի ինստիտուտի տնօրենի պաշտոնում ընտրվեց Կարեն Գրիգորյանը

ՀՀ ԳԱԱ նախագահությունը սույն թվականի մարտի 6-ի նիստում ՀՀ ԳԱԱ Մ. Մանվելյանի անվան ընդհանուր և անօրգանական քիմիայի ինստիտուտի տնօրենի պաշտոնում ընտրեց տեխնիկական գիտությունների թեկնածու Կարեն Գրիգորյանին:



Կարեն Գրիգորյանը ծնվել է 1961 թվականին: 1983 թ.-ին ավարտել է Երևանի պոլիտեխնիկական ինստիտուտը մասնագիտությամբ՝ ճարտարագետ-մետալուրգ:

2005 թ. պաշտպանել է թեկնածուական ատենախոսությունը:

Կարեն Գրիգորյանի գիտական հետաքրքրություններն ընդգրկում են՝ վոլաստոնիտի սինթեզ և հատկությունների ուսումնասիրում և մեծածավալ արտադրության կազմակերպում, արդյունքների ներդրում ռետինատեխնիկական իրերի արտադրությունում, ոսկերչական կադավարման փոշիների մշակում և

կիսաարդյունաբերական տեղակայման մշակում, փոքր տրամաչափի հրթիռային շարժիչների մշակում:

Կարեն Գրիգորյանը 8 արտոնագրի, 27 գիտական հոդվածի, 12 գեկույցի հեղինակ է:

Կարեն Գրիգորյանը ՀՀ ԳԱԱ Մ. Մանվելյանի անվան ընդհանուր և անօրգանական քիմիայի ինստիտուտում աշխատում է 1983 թ.-ից՝ կրտսեր գիտաշխատողից մինչև լաբորատորիայի վարիչ:

ՀՀ ԳԱԱ տեղեկատվական-վերլուծական ծառայություն

ՀՀ ԳԱԱ Արամ Նալբանդյանի անվան քիմիական ֆիզիկայի ինստիտուտի տնօրենի պաշտոնում ընտրվեց Սեյրան Մինասյանը

Սույն թվականի փետրվարի 20-ին ՀՀ ԳԱԱ նախագահությունը ՀՀ ԳԱԱ Արամ Նալբանդյանի անվան քիմիական ֆիզիկայի ինստիտուտի տնօրենի պաշտոնում միաձայն ընտրեց քիմիական գիտությունների թեկնածու Սեյրան Մինասյանին:

Սեյրան Մինասյանը ծնվել է 1963 թ.-ին՝ Գյումրիում: 1985 թ.-ին ավարտել է Երևանի պետական համալսարանի քիմիական ֆակուլտետը: Սեյրան Մինասյանի գիտական հետազոտությունների ոլորտն ընդգրկում է քիմիական ռեակցիաների կինետիկան և մոդելավորումը, կենսակտիվ մետաղախելատների և հակաօքսիդիչների ռեակցիաները, շրջակա միջավայրի քիմիան:


Սեյրան Մինասյանը 55 գիտական հոդվածի, 65 գիտական գեկույցումների թեզիսի հեղինակ է: Մինչ այժմ ՀՀ ԳԱԱ քիմիական ֆիզիկայի ինստիտուտի քիմիական անվտանգության ֆիզիկաքիմիական հիմնահարցերի գիտական խմբի ղեկավարն էր:

2016 թ.-ից ՀՀ ԳԱԱ Արամ Նալբանդյանի անվան քիմիական ֆիզիկայի ինստիտուտում գործող քիմիայի մասնագիտական 017 խորհրդի անդամ է:

Սեյրան Մինասյանը զբաղեցրել է ՀՀ բնապահպանության նախարարության Շրջակա միջավայրի վրա ազդեցության մոնիտորինգի կենտրոնի տնօրենի տեղակալի պաշտոնը:

ՀՀ ԳԱԱ տեղեկատվական-վերլուծական ծառայություն





ԻՆԻ ՀԱՆՔԱՐԵՐԻ ՊԱՏՈՒԿԱՆ ԴԱԵՐԸ

Նայեցե՛ք: Գյուղացի ռանչպար մարդիկ են, հարևան, միասին մեծացած, իրար հետ օխտը բեռը աղ ու հաց կերած, բայց եթե մեկի արտը լավ է գալի կամ ամասունը բազմանում, մյուսը մախանձից հիվանդանում կամ ինչպես իրենք են ասում՝ «արնով է ընկնում»:

Վաճառականներ են, առուտուր են անում, թեկուզ մրցակիցներ էլ չեն, բայց մեկը մյուսի հաջողությունը լսելիս քունը կորցնում է ու էնքան էլ իր գործի վրա չի մտածում, որքան նրա հաջողության վրա է դարձնում ու տեղն ընկած տեղը ոչինչ չի խնայիլ նրա գործին վնասելու:

Հոգևորական է. ինչքան վարձ ու պատիվ կուզեք տվեք - միշտ դժգոհ է, բողոքում է, անգագառվում է ամարդարությունից, և գիտե՛ք եղ ամարդարությունը որն է, որ իր ընկերն էլ է նույնը ստանում կամ էլ նա էլ է կարողանում ապրել:

Քաղաքացի թե գյուղացի՝ երկուսը վեճ ունեն իրար հետ: Ոչ մի դատաստանում չի վերջանում նրանց վեճը, տևում է երկար տարիներ և հաճախ իրենց

համար, որ մեզ հետ չի, մեր թայֆիցը չի:

Եղպես էլ մտեք ազգային, հասարակական, գրական գործիչների մեջ: Մեկը մյուսի հռչակն ու հաջողությունը տանել չի կարողանում:

Ինչո՞ւ է էսպես:

Պարզ հասկանալու համար երևոյթին պետք է նայել բնության ու պատմության օրենքների բարձրությունից, էն լայն, խաղաղ ու խոր հայացքով, որ նրանք միայն կարող են տալ: Ուրիշ ընդհանուր հանգամանքների հետ զարհուրելի ծնող է եղել մեզ համար մեր պատմությունը: Նա երկար դարերով մեզ դրել է բարբարոս ժողովուրդների ոտների տակ: Իսկ ամեն կենդանի գոյություն, որ ոտնատակ է ընկնում, եթե չի մեռնում, այլանդակվում է, դառնալով ու փչանում: Եսպես է բնության օրենքը:

Է՛ն հասարակ վարունգի թուփն ինչ է, հայտնի է, որ եթե նա էլ ոտի տակ է ընկնում՝ էլ նրա պտուղը չի ուտվում, էնքան է դառնալով: Նրա համար էլ ձեզ թույլ չեն տալ, որ նրա թուփը ոտի տակով անեք: Էնպես դառնալով ու դաժանալով է և

հենց է՛ն, ինչը որ դարձնում է մի կյանք գեղեցիկ ու հրապուրիչ և մի ժողովուրդ թանկ ու համակրելի:

Արդ, եթե մենք ունենք ազգային իմաստություն, հոգու արիություն և առողջ բնազդներ, անկարելի է աչքներս փակենք մեր էս ծանր հիվանդության առաջ և չզգանք, որ մեր հոգին շատ է դառնացած, մեր ներքին մարդը շատ է փչացած, և դրա դեմ կռվելու, առողջանալու առաջին պայմանը է՛ն է, որ մենք և՛ մեր արտերում, և՛ աշխարհի առաջ անկեղծ խոստովանենք ու ճանաչենք մեր դժբախտությունը: Ապա թե եղ փրկարար գիտակցությանը կիստեսն ինքնակատարելագործության բարձր ցանկությունն ու ազնիվ գործը:

Ուրիշ ճանապարհ չկա, ներսից է լինելու հաստատ փրկությունը, որովհետև ներսից ենք փչացած:

Դրանցից ոչ մինը առանձին վերցրած պատասխան չի տալ դրված հարցին, և նա դարձյալ կխոսի ու պատասխան կուզի, թե ո՞րն է էս ժողովրդի պատմական ճանապարհը, սրա գոյության խորհուրդը, ի՞նչ է կամենում սա, սրա ոգին: Եվ ո՞ւր որոնենք էդ ոգին: Արդյոք Սասունի, Ջեյթունի, Մոկաց, Դարաբաղի ու Լոռու սարերո՞ւն, թե՞ Շիրակի, Արարատի ու Մուշի դաշտերում: Արդյոք հին վանքերի միստիք կամարների տա՞լ, ուր ծավալվում է «խորուրդ խորին անհաս և անսկիզբն», թե՞ դալար մարգերում ու խաչահանգիստ հովիտներում, ուր «լուսնյակն անուշ, հովն անուշ, շինականի քունն անուշ» են: Արդյոք «ի խորոց սրտի խօսք ընդ Աստուծոյ» խոսող երկնաչու պաղատանքների՝ մեջ, թե՞ «Վերջ Դայաստանի» հայրենասիրական ողբի հառաչանքների ու մորմոքների մեջ: Իհարկե, էս ամեն տեղերում, էս ամենի մեջ: Եվ ինչքա՞ն մեծ է խաղաղ կյանքի ու խաղաղ աշխատանքի կարոտը էս ամեն տեղերում ու ամենի մեջ, խորթ արյունի ու պատերազմի, խորթ սրածության ու ավերածության...

Ո՞րն է հայ ժողովրդի ոգին և ի՞նչ է ուզում նա:

Դառնացած ժողովուրդ

Մտածումներ կան, որ սաստիկ ծանր են, բայց դուք դատապարտված եք մտածելու, չեք կարող փախչել նրանցից: Նրանք են ծանր հիվանդությունների նման են, երբ դուք գիտեք, որ ձեր մարմնի մեջ կրում եք քաղցկեղի խոցը, բարակացավի բացիկները կամ ժանտախտի թույնը: Չեք կարող անց կենալ ու արհամարհել, կամ նրանք պետք է ձեզ հաղթահարեն ու սպանեն, կամ դուք պետք է մարդկային հանճարի տված ամեն միջոցներով վեր կենաք ցավերի դեմ ու ազատվեք, առողջանաք, իհարկե, եթե էնքան արիություն ու հասկացողություն ունիք:

Է՛ն մարդիկ, որ երկար ու լուրջ զբաղվել են մեր ժողովրդով, մեր մարդով, միշտ եկել են

մի ծանր եզրակացության, թե շատ չարություն կա մեր հոգում: Եսպես են ասում նրանք և ասում են խորը ցավով, ինչ ցավով որ կարելի էր ասել, թե բարակացավի բացիկներ կան իմ կրծքում:

Բայց քիչ են էս տեսակ ազնիվ ու քաջ մարդիկը: Մեծ մասամբ ախտի գոյությունը ընդունելով հանդերձ, իրենց առողջ են համարում ու միշտ ուրիշներին են հռչակում հիվանդ: Ամեն միևն իմը չար չի, թայֆայական չի, եղ ամենը իրենից դուրս ուրիշներն են:

Բայց, իհարկե, սրանց չպետք է հավատալ, ոչ էլ ականջ դնել: Ե՛ն մարդիկ, որ մեր ամբողջությունը տառապում է մի ծանր ու խոր բարոյական հիվանդությունով:

ամբողջ կյանքն ու կայքը դնում են էդ վեճի վրա, մինչև կարողանում է մեկը մյուսին խեղդել, գետնին հավասարել կամ հենց երկուսն էլ փչանում են:

Մամուլ կա: Տասնյակ տարիներով ու անհամար դեպքերով փորձված է, էլ հայիոյանք, էլ գրապարտություն, էլ ափաշկարա սուտ, էլ չարախոսություն, կեղծավորություն: Նեղ թայֆայականությունը հո ոչ մի գյուղում գուցե էնքան անվայել կերպարանք չի առել, որքան սրա մեջ: Մի հայտնի հրապարակախոս պատմում էր, թե պարզ խոսում էին մեր խմբագրատանը, թե էս կամ էն գրողին, ինչքան էլ լավ գրվածք հրապարակի, միշտ պետք է գարկել, ծաղրել կամ լռեցնել, մի խոսքով, ամեն կերպ աշխատել սպանել, միայն նրա

մարդը, նրա հոգին, սիրտը, միտքը, ու ներքին դառնությունը դուրս է տալիս, հայտնվում է և՛ աչքերում, և՛ դեմքին, և՛ խոսքերում, և՛ գործերում, ամեն տեղ, ամեն ասպարեզում, ու ամբողջ կյանքը դարձնում է դառն ու դաժան: Եվ էս տեսակ կյանքը կունենա, այո, շատ բան, և՛ «հառաջդիմություն», և՛ «կուլտուրա», և՛ «մամուլ», և՛ «բարեգործություն», բայց եղ բոլորը ներսից ճիճվի կերած պտուղի նման են, և տառապում են հիմնական պակասություններով, մի ընդհանուր ցավով, որի ճարը դրսից անել չի կարելի: Եղ տեսակ կյանքը կտա և տաղանդավոր մարդիկ, սակայն նրանք էլ կլինեն դառն ու դաժան: Բայց նա չի կարող ծնել ազնիվ մարդիկ, բարի սրտեր ու բարձր ոգիներ,

Անկեղծ չենք

Երբեք այսքան մեծ չի եղել անկեղծության կարիքն ու կարոտը, ինչպես այսօր, և երբեք այսքան ահռելի չափերով չի հայտնվել կեղծիքը, ինչպես այսօր:

Դարավոր կարգերի ու հասկացողությունների հեղաշրջումի օրը, պատմության ահավոր դատաստանի օրը:

Մեծ ակեղծությունների ու ակնկալությունները ամենքին տեղահան են արել, դուրս են բերել իրենց անկյուններից, և ահա - ժողովուրդներն իրենց ունեցած ուժերով հրապարակի վրա են:

Ամեն մարդ շարժվում է, ամեն մարդ խոսում է:

Անշուշտ նա պիտի շարժվեր այնպես, ինչպես ինքն է կամենում, և խոսեր այն, ինչ որ ինքն է մտածում:

Այդպես պիտի լիներ մարդը, առավել ևս այս տեսակի մի ժամանակի առաջ, երբ շար-

ժումը կամ խոսքը կարող է ունենալ այնպիսի հետևանք, որ ուրիշ ժամանակ աներևակայելի է:

Նրա այս խոսքից կամ այն շարժումից կախված է շատ բան:

Եվ հանկարծ... դուք տեսնում եք... Նա խաղ է անում, դերասանություն է անում:

Դերասանությունը գեղեցիկ է բեմի վրա, ուր խաղում են, բայց նա գարշելի է կյանքի մեջ, ուր ապրում են:

Դրա համար էլ բեմի վրա խաղացողները շնորհով մարդիկ են, իսկ կյանքում խաղացողները ցածրն ու կեղծավորները:

Նրանք խաղ են անում ամեն տեղ, ամեն բանի հետ և, ահա, մեր կյանքը ավելի նման

է թատերական բեմի, ու այդ բեմը թեև փոքր, բայց, տեսեք, որքա՛ն դերասաններ ունի...

Իրենց վրա առած զանազան դերեր՝ նրանք մտել են ու խաղում են այս կամ այն ասպարեզում:

Ահա սա՝ ներկայանում է ամեն տեղ որպես չհասկացված ու հալածված գաղափարական գործիչ, մյուսը նշանավոր հերոս է խաղում, երրորդը հրապարակախոսություն է սարքել, չորրորդը բարեգործ է ձևանում, հինգերորդը գրող է կեղծում, վեցերորդը հանդիսանում է արդեն որպես նահատակ, յոթերորդը գալիս է որպես դատավոր, ամենքին մեղադրելու և ամենքից հաշիվ ուզելու...

Ու, բնականաբար, չնայե-

լով այսքան շատ գործիչների ներկայությանը, դուք զգվում եք, որ ցուրտ է, որովհետև չկա անկեղծության ջերմությունը, զգացմունքի հուրը, որովհետև նրանք խոսում են լեզվով, իսկ սիրտները շատ է հեռու, և զգվում եք վերջապես:

Սրանք ոչինչ չեն սիրում, այլ ցույց են տալիս, թե սիրում են:

Եվ ինչպես դերասան ունի իր դերը, որ տանում է, իսկական գործիչն ունի իր խաչը, որ կրում է, սրանք էլ, այս կամ այն գործին կաշեկով, փոխանակ գործի ծանրության տակ մտնելու և տանելու, իրենք են բարձրանում, հեծում նրա վրա ու շինում իրենց էշը:

Եվ այս դերասաններից ամեն մեկն ունի իր էշը, ու միշտ էլ իր էշն է քշում, թեկուզ աշխարհը քանդվի:

Հաճախ սրանց շահատալությունը տևում է շատ երկար,

նայած թե ինչ տեղ են մեյդան բաց արել և ով են թամաշավորները կամ երբ են գլխի ընկնելու:

Ու որպեսզի այդ թամաշավոր-ժողովրդի սիրտը շահած լինեն ու բարեկամ պահած, միշտ գոռում են «ժողովրդի» անունը: Խոսքն ինչի մասին ուզում է լինի, միշտ վերջացնում են «ժողովրդիդ»։ «ժողովրդիդն այդպես է կամենում...», «ժողովրդը մեզ հետ է...», «ժողովրդը ձեզ կդատի...», «Ո՞ր ես, ժողովուրդ, ամարգում են քեզ...»: Այդ հերիք չէ դեռ: Ժողովրդին էլ են կործանում...

Իրենց մարդկանցից ոմանց հանդես են բերում կեղծ ստորագրություններով, անգրագետների իրենց շինած հողվածներով ու ներկայացնում որպես ժողովուրդ:

- Տեսե՛ք, ժողովուրդը մեզ հետ է:

Դե եկեք ու ջոկեցեք իսկականը կեղծիքից:

Ապրիլ-մայիսյան թավշյա հեղափոխությունից հետո բազմաթիվ բնագավառներում շարունակվում են փոփոխվել կրքերը: Տարբեր հարթակներից ով ինչ ուզում է բողոքի ծայն է բարձրացնում ամեն ինչի նկատմամբ՝ ոչ մի բանի առաջ կանգ չառնելով, շատ հաճախ ամբողջովին կեղծելով նաև իրականությունը: Հասարակության մեջ սթրեսային իրավիճակ է ստեղծվել, անընդհատ հետևել լուրերին, կառչած մնալ լրահոսին, չգիտակցելով, թե բարոյահոգեբանական ինչպիսի ճնշումների են ենթարկվում....

պետության և Հայաստանյայց Սուրբ Առաքելական Եկեղեցու հարաբերությունները կարգավորված են դեռևս 2005 թ. Սահմանադրությամբ ընդունված օրենքով, իսկ 2007 թ. Ազգային ժողովի կողմից ընդունվել է «ՀՀ և Հայաստանյայց Առաքելական Սուրբ Եկեղեցու հարաբերությունների մասին» օրենքը. Ցավոք այդ օրենքը չի համապատասխանացվել 2015 թ. Սահմանադրության փոփոխությունների հետ: Եկեղեցու հակառակորդները ելմունով Սահմանադրության 17-րդ

գոթյունների և սրբապղծությունների մասնակից են լինում նաև Հայ Եկեղեցու առանձին «ամառակ որդիները»:

Անհրաժեշտ են համարում հստակ նշել, որ այսօր Հայ Առաքելական Սուրբ Եկեղեցին գործում է անսովոր դժվար պայմաններում և ողջունում են կառավարության նախաձեռնությունը Եկեղեցու ներկայացուցիչների հետ միասին կուտակված հարցերին լուծումներ տալու համար: Նաև ուզում են հիշեցնել, որ ոչ միայն մեր հարևան, այլ Եվրոմիության երկրներում կրոնը մարմնավորող

Ամենայն իրավամար մի առանձին շնորհ, նախախնամություն պետք է համարել Վեհափառ Հայրապետի գահակալությունը, նա իր ողջ եռանդով ձեռնամուխ եղավ եկեղեցական ներքին և արտաքին կյանքի կազմակերպմանը: Վեհափառ Հայրապետի գահակալության ընթացքում Եկեղեցու հոգևոր վերածնունդը մոր թափ է ստացել: Ստեղծվում են մոր թեմեր, կատարելագործվում է Աստվածաբանական կրթության համակարգը, կառուցվում են տաճարներ: Մեր եկեղեցին այսօր ակնառու

ՊԵՏՔ Է ԴԱԴԱՐԵՑՆԵԼ ՀԱՅ ԱՌԱՔԵԼԱԿԱՆ ԵԿԵՂԵՑՈՒ ԴԵՄ ԴԱՎԱԴՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

Ափսոսանքի մեծ ցավով ուզում են անդրադառնալ այն բացասական դրսևորումներին, որոնք ուղղված են Հայ Առաքելական Եկեղեցու և նրա սպասավորների նկատմամբ: Հայ Առաքելական Եկեղեցու յուրաքանչյուր անդամ պետք է ամեն ինչ անի կանխելու Եկեղեցու դեմ ամեն մի դավադրություն, երբ Եկեղեցին դավադիր նշանառության տակ է առնված: Նրանք ուղենիշ ընդունելով ժողովրդի բացարձակ մեծամասնության կողմից ընդունված մոր Հայաստանը, գործի են դրել «Նոր Հայրապետ» դավադիր լոգունը: Բարոյականության և ազգային նկարագրի անօրինական ոտնահարմամբ, նրանք ամենագաղտնի հերյուրանքներն են տարածում Սուրբ Էջմիածնի և Ամենայն Հայոց Կաթողիկոսի նկատմամբ.... Հավանաբար այդ արշավի պարզաբանման համար է նաև Վարչապետ Նիկոլ Փաշինյանի որոշմամբ ստեղծված «Պետություն-Եկեղեցի հարաբերությունների պարզաբանման աշխատանքային խումբը»:

Մեզ թվում է այդ խմբում պետք է ընդգրկել նաև Սփյուռքի մի քանի ներկայացուցիչներ: Հիշեցման կարգով ուզում են նշել, որ Խորհրդային ժամանակներում մեր Եկեղեցին ոչ մի իշխանություն չուներ, սակայն նրանք հաշվի առնելով մեր եկեղեցու մեծ հոգևոր դերը հայկական համասփյուռ համայնքում, օգտագործում էին այն իրենց քաղաքական նպատակների համար:



հողվածից, ըստ որի կրոնական կազմակերպություններ անջատ են պետությունից, հանգում են ծայրահեղ եզրակացության, որ Հայ Եկեղեցին որևէ առնչություն չպետք է ունենա ազգային ինքնության, հոգևոր կյանքի պահպանման և զարգացման հետ: Հազարամյակների պատմություն ունեցող Հայաստան աշխարհի գոյությանը սպառնացող բոլոր օրհասական պահերին, երբ վտանգվել է Հայ ազգի անվտանգությունը, հաղթող է եղել ազգի միասնական ոգին, որը գլխավորել է Հայ Առաքելական Եկեղեցին՝ իր գահակալներով, քանզի հարյուրամյակներ շարունակ մենք չենք ունեցել պետականություն:

Այսօր այս հեղափոխական մոր ժամանակներում ևս ազգային միասնությունը սատարող և անխախտ պահող մվիրյալներ են պետք, պետք է հավատառ Աստված, հավատառ Հայ Առաքելական Եկեղեցու և նրա սպասավորների նկատմամբ:

Հերթական անգամ մեր հասարակության մեջ ընթանում է միմյանց հերքելու, հակադրվելու քաղաքականությունը: Բոլոր այն դեպքերում, երբ միասնական ենք եղել, հաղթել ենք: Այդ Հայ ազգի ոգին ու կրոնը անպարտելի է, որոնց պահպանման համար անհաղթափառելի վահան է եղել Հայ Եկեղեցին: Հայ ժողովուրդը դարեր շարունակ եղել է Քրիստոնեության կրողը և իր սոցիալական և հոգեբանական բոլոր խնդիրները փորձել է լուծել Մեր Եկեղեցու շրջանակներում Հայ հոգևորականի անմիջական ուղղորդությամբ:

Շատ ցավալի է, որ Հայոց Եկեղեցու և նրա Հայրապետի նկատմամբ ոտնո

կառույցների նկատմամբ գոյություն ունի ցայտուն արտահայտված **Գերհարգալից** վերաբերմունք: Նրանց մոտ կրոնական կազմակերպություններին տրամադրվում է որոշակի պետական ֆինանսավորումներ, մինչդեռ մեզ մոտ Եկեղեցին իր գոյությունը պահպանում է բացառապես անհատ բարերարների շնորհիվ, Վեհափառ Հայրապետի նկատմամբ ունեցած մեծ վստահության և հարգանքի համար:

տեղ է զբաղեցնում համաշխարհային Քրիստոնեության համրության մեջ և գործում մասնակցություն է ունենում միջկրոնական երկխոսությանը:

Այսօր Մայր Աթոռ իր նորակառույց հոյակերտ բովանդակությամբ դարձել է հզոր կաճառ, որը նաև հայագիտության և ուսումնական կենտրոն է: Մեր Գերաշնորհ Հայրապետներից քչերն են կարողացել իրենց վերապահել այսպիսի եկեղեցական մեծ առաջընթաց այն էլ այսպիսի դժվարին պայմաններում: Այսօր ևս մեր Ազգային Եկեղեցին և նրա Հովվապետը ապահովում են Հայոց Առաքելական Աթոռի ժառանգականությունն ու հարատևությունը:

Ո՞ւմ եք Դուք ծառայում, եթե վարկաբեկելով մեր եկեղեցուն և հավատի խորհրդանիշները, ուզում եք մեր ժողովրդի հոգում խեղաթյուրել այդ գոյատևման խորհրդանիշներից մեկը:

Լիահույս են, որ առողջ բանակաությունը կհաղթի՝ վերջ տալու մեր ազգին ոչ բնորոշ ներկա սրբապղծությանը և ատելությանը, և մեր Եկեղեցին և նրա Հովվապետը կշարունակեն իրենց սրբազան գործը՝ ի փառս աշխարհասփյուռ հայության միասնականության և մեր մոր անկախ Հայոց Պետականության ամրապնդմանը:

Վիլեն ՀԱԿՈՐՅԱՆ
ՀՀ ԳԱԱ ակադեմիկոս


ՀԱՅ ԵԿԵՂԵՑՈՒ 20-ՐԴ ԴԱՐԻ ՆՇԱՆԱՎՈՐ ԳՈՐԾԻՉՆԵՐԻՆ ՆՎԻՐՎԱԾ ԳԻՏԱԺՈՂՈՎԻ ՀՐԱՎԵՐ

2019 թ. հոկտեմբերի 8, Լոս Անջելես, ԱՄՆ

Հայ Առաքելական Եկեղեցու ԱՄՆ Արևմտյան թեմը Գերաշ. Տ. Հովնան Արք. Տերտերյանի առաջնորդությամբ 2019 թվականի հոկտեմբերի 8-ին Լոս Անջելեսի Սրբոց Դեոնոյանց Մայր Եկեղեցում կազմակերպում է գիտաժողով «Հայ Եկեղեցու նշանավոր գործիչները 20-րդ դարում» թեմայով:

Գիտաժողովի ընթացքում հոգևորականներ և հայագետներ կներկայացնեն վերջին հարյուրամյակի մեր անվանի հոգևորական գործիչներին նվիրված զեկուցումներ, որոնց շարքը ներառում է՝ Մկրտիչ Ա Խրիմյան Հայրիկ, Մաղաքիա Արք. Օրմանյան, Կոմիտաս Վարդապետ, Գեորգ Ե Սուրենյանց, Խորեն Ա Մուրադբեկյան, Գեորգ Զ Չորեքչյան, Վազգեն Ա Պալճյան, Գարեգին Ա Սարգիսյան կաթողիկոսներ, Գարեգին Հովսեփյանց, Գարեգին Եպս. Խաչատուրյան, Շնորհք Արք. Գալուստյան, Թորգոմ Արք. Մանուկյան: Վերջիններիս կենսագրությունները հուշում են, և դա գիտաժողովի հայեցակարգն է, թե ինչպես մեր եկեղեցին ու պետությունը շարունակում են սնուցող իրողություններ լինել նաև նոր օրերի, նոր սերնդի համար:

Հրավիրում ենք Հայաստանի և արտերկրի մեր գործընկերներին՝ մասնակցելու գիտաժողովի աշխատանքներին (առկա կամ հեռակա): Նախընտրելի թեմաներն են՝ 20-րդ դարի մեր եկեղեցու գործունեությունն ու նշանավոր հոգևորականները: Մասնակցության հայտը կարող եք ուղարկել norliavan@gmail.com էլ. հասցեին՝ նշելով մասնակցի տվյալները, աշխատավայրը, գիտական կոչումը, թեմայի վերնագիրը և համառոտ ծանուցում թեմայի ընդհանուր բովանդակության մասին: Առաջադրվող պայմանն է, որպեսզի զեկուցումը նախկինում տպագրված չլինի: Հայտերը ներկայացնելու վերջին ժամկետն է 2019 թ. հունիսի 30-ը: Ընդունված զեկուցումները կտպագրվեն առանձին ժողովածուով:



ԿԻՄ ԲԱԿՇԻ

Օրերս 88 տարեկան հասակում կյանքից հեռացավ նշանավոր հայագետ, գրող, հրապարակախոս, կինոսցենարիստ, ճշմարիտ մտավորական և Մարդ ԿԻՄ ԲԱԿՇԻ:

Նա առաջին անգամ Հայաստան եկավ 1965 թվականին: Հռչակավոր «Օգոստոս» հանդեսի գիտության բաժնի վարիչը եղել էր լուսաստանեղու եղբոր 50-ամյակը: Սա այն ժամանակ, երբ եղբոր մասին խոսելն իսկ տարբեր էր:

«Ավելի քան հիսուն տարի է անցել: Ես արդեն 8 գիրք եմ գրել Հայաստանի մասին, համահեղինակ եմ 20 սերիայից բաղկացած «Մատենադարան» ֆիլմաշարի և հայարտությամբ ինձ համարում եմ հայագետ:

Երբ 50 տարուց ավելի հնարավորություն ունես կրկին ու կրկին վերադառնալ Հայաստան և մտքով անդդիստ հայ ժողովրդի ու նրա պատմության հետ ես, չես կարող անտարբեր մնալ այդ զարմանալի ժողովրդի նկատմամբ: Ես ինձ հայ չեմ համարում, բայց գիտեմ, որ անկեղծորեն ու սրտանց սիրում եմ այդ արժանապատիվ ժողովրդին:

Քանի՞ ապրող, գոյատևող ժողովուրդ մենք գիտենք, որոնց մասին, ինչպես հայերի մասին, կարող ենք ասել՝ նրանք ակտիվ դեր են խաղացել մարդկության պատմության մեջ՝ սկսած Ասորեստանի, Բաբելոնի, Հին Հռոմի և Սալարտայի, Հին Հունաստանի ժամանակակներից: Անհեթեթ և անհավատալի չի թվում արդյո՞ք, որ դարերով ինքնուրույնությունից զրկված, բռնադատված, կողոպտված, եղեռնի ենթարկված, աշխարհով մեկ ցիր ու ցան եղած հայ ժողովուրդը կարողացավ պահպանել իր լեզուն, իր հոգևոր հարստությունները, մշակութային ավանդույթները և հպարտորեն ներկայանալ աշխարհին որպես իրենավոր և արժանապատիվ մի ժողովուրդ, որ կոչվում է հայ:

Ինձ միշտ զարմացրել է հայ ժողովրդի բացառիկությունը: Այո, նա ժամանակակից էր Ասորեստանի, Բաբելոնի, Հին Հռոմի, նրանց կրտսեր եղբայրների: Այսօր նրանք չկան, իսկ Հայաստանը, հայը՝ կա: Իմ համոզմամբ դրա պատճառներից մեկն այն է, որ ամենահասարակ հայ անգամ պատկերացում ունի և գիտե իր ժողովրդի պատմությունը: Երբեմն այն առասպելացված է, գունգադարոված, սակայն իր ժողովրդի պատմությունն է: Նա քեզ կարող է հպարտորեն պատմել, թե որքան հին է իր ժողովուրդը և ինչպիսի լեգենդար զորավարներ ու թագավորներ է ունեցել ինքը՝ կապված աշխարհակալ Տիգրան Մեծի, ծովից-ծով Հայաստանի մասին: Ճիշտ է, դա կարճ է տևել, բայց դա կարևոր չէ: Հայը հպարտացել և հպարտանում է նրա քրեայից արքայով, Կասպից ծովից Սև ծով տարածված երբեմնի իր Հայաստանով:

Այո, ամեն մի հայ գիտե իր ժողովրդի պատմությունը: Նա հիշում է ամեն ինչ՝ և իր փառավոր անցյալը և կորուստները և մանավանդ Մեծ եղեռնը, որ հայենագրկեց հայ ժողովրդին, խլեց միլիոնավոր հայերի կյանք և այդ ժողովրդին սփռեց աշխարհով մեկ:

Ոչ, ես պարզապես չեմ սիրում հայերին և Հայաստանը, այլ շատ-շատ եմ սիրում և հպարտ եմ, որ իմ ստեղծագործական կյանքի 50-ից ավելի տարիները նվիրել եմ այդ հին ու հպարտ ժողովրդի պատմությանը»:

Կիմ Բակշին Հայաստանի մասին 7 գրքի հեղինակ է, 20 ֆիլմից բաղկացած փառահեղ, բացառիկ ֆիլմաշարի հեղինակ է:

«Մատենադարանի» նկարահանումների ժամանակ Կիմ Բակշին տառաջիորդեմ եղավ աշխարհի բոլոր այն ծայրերում, որտեղ պահվում են Հայոց հին ձեռագրեր՝ Փարիզ, Լոնդոն, ԱՄՆ, Լիբանան, Սիրիա, Իրան, Սուրբ Ղազարի կղզի (Իտալիա), որը խոշորագույն գրապահոցներից է և ուր պահվում է հայերենով ամենահին մատյանը՝ «Մկկե» թագուհու Ավետարանը:

Արժանացել է Խորհրդային Հայաստանի պետական մրցանակի, Պատվո ճշման շքանշանի (երկու անգամ), Մովսես Խորենացու մեդալի և այլ պարգևների:

Կիմ Նաումի Բակշի (մարտի 1, 1931, Մոսկվա, ԽՍՀՄ - մարտի 5, 2019, Մոսկվա, Ռուսաստան), ազգությամբ բաշկիր, ռուսաստանցի գրող և կինոդրամատուրգ, հայագետ: Հայագիտությամբ է զբաղվում 1965 թվականից: Հայաստանի մասին 7 գրքի հեղինակ է, «Մատենադարան» փառահեղ ֆիլմաշարի համահեղինակ է:

- «Արծիվ և սուր», 1970 թ.
- «Ճակատագիր և քար», էսսեներ, 1983 թ.
- «Սուրբ Ղազարի հարությունը», 1960 թ.
- «Մենաստանից՝ սիրով», 2000 թ.
- «Մեր աշխարհը նման է անվի», 2003 թ.
- «Սառած ժամանակը», 2006 թ.
- «Կապույտ երկնքի տակ», 2007 թ.



ՄԵՆ մի ժողովուրդ ունի իր Կրեմլը, իր Լուվրը, իր Բուրգերի հովիտը: Հայաստանում դա Մատենադարանն է: Այնտեղ մտնում ես՝ ինչպես համերգասրահ:

Սկզբում նվագախումբը լարում է գործիքները, բազմաձայն աղմկում է երևանը: Վեր ես բարձրանում վարդագույն շենքերով պարսպապատ-



Սեղանին վառվում էր մոմը...

ված փողոցով դեպի բարձունքը, հնչյունները մեկը մյուսի ետևից լռում են: Մնում են ծննդուկների խլացուցիչ ճռվողունը և մեկ էլ՝ մանուկների գիլ կանչերը հարթ ու անվերջանալի աստիճաններին:

Սա հնչում է որպես երաժշտական առաջին թեմա: Եվ դրա հետ, դրան զուգահեռ, յուրաքանչյուր քայլի հետ դեպի վեր՝ ծնվում է, ուժգնանում Մատենադարանի հանդիսավոր մեղեդին:

Մատենադարանը վեհասքանչ մոտենում է, աճում որպես ամրոց, որպես հուշարձան: Լեռան պատարանին նրա ճակատը նման է հին ձեռագրի սկզբնաձև խորանի, մեկը այնտեղ պահվող հազարավոր խորաններից: Մատենադարանը հին հայերենում մշակակել է մատյանների պահոց, գրադարան, գրապահոց:

Այստեղ տամվեց հազար ձեռագիր մատյան և պատառիկ կա, փոքրից՝ տասնինը գրամանոցից, մինչև ամենամեծը՝ երկփթանոց մագաղաթյա հսկան: Ամենահին թերթիկները պահպանվել են V դարից, հնագույն մանրանկարներն ստեղծվել են VI դարում՝ Ռուսիայի մկրտությունից առաջ, Անգլիան նորմանների նվաճելուց առաջ:

Մատենադարանում պահպանվում են հին աշխարհի մտածողների շատ երկեր, որոնց բնագրերը կորս-

գիրը, բայց չեն կարողացել ջնջել թանաքը, տառերն ասես փորագրված են քարի վրա:

...Հինգերորդ դարի շեմին մեծ լուսավորիչ Մեսրոպ Մաշտոցը ստեղծեց հայոց այբուբենը՝ 36 գիր: Մեսրոպ Մաշտոցի և նրա զինակիցների ջանքերով հիմնադրվող հայկական դպրոցներին զուգահեռ ստեղծվում էին գրապահոցներ՝ մատենադարաններ, աշակերտները սերմերի նման սփռվում էին ամբողջ երկրով, գրառվում էր Հայաստանի՝ նրա թագավորների և գիտնականների, նրա մղած պատերազմների ու մեծության, ծանր ժամանակներում նրա ցուցաբերած արիության և անկույնության պատմությանը՝ և այս ամենի մեջ կար ինչ-որ փոթևոտություն, վերահաս իրադարձությունների կռահում, մատյաններում ժողովրդի հիշողությունը, ազգությունը և լեզուն առարկայացնելու ծագում:

Դա հիշեցնում էր գարունը անապատում, երբ մի քանի օրում շուրջն ամեն ինչ կանաչում է, ծածկվում վառ ծաղիկներով: Բնությունը շտապում է անցնել ծաղիկից պտուղ դառնալու ուղին: Ծաղկոցին փոխարինելու է գալիս ամռան տոթը, չար խորշակները մոխրացնում են հանկարծական ստեղծված կանաչ գորգը, միայն փութկոտ թափված սերմերն են պահպանվում մինչև հաջորդ բարենպաստ պահը, որպեսզի նորից ծաղկում ապրեն:

Հայերի ու հայ ձեռագրերի պատմությունը որքան նման է բնության այս բնականոն շրջապտույտին: Այն տարբերությամբ, որ ամռան երաշտին և ծմռան սառնամանիքներին բնության մեջ պարտադրաբար փոխարինելու է գալիս զարմանալի ծաղկոցը, իսկ Հայաստանում ծաղկափթույնը տրորվում էր բազում դարեր:

Երբ գալիս էին թշնամիները, գրիչը՝ ձեռագրեր ընդօրինակողը, շալակն առած մագաղաթյա ծանր թերթերի կապոցը, թանաքը, ներկերը և ընդօրինակման մատյանը գնում էր ժողովրդի ետևից: Եվ որտեղ էլ որ նա դադար առներ, շարունակում էր ընդօրինակման իր աշխատանքը:

Բազմաթիվ մատյանների թերթեր այրվել են հրդեհներից, ցողվել արյունով, իսկ հիշատակարանները պատմում են պատերազմների, ոստիկ գիշերային հարձակումների, քոչվորների խարույկների, գաղթի ճամփաների, մարդկանց կորստյան, գրիչների աշխատանքի մասին, ովքեր հիսուն, վաթսու տարի անընդմեջ «գոր ու գիշեր» ձեռագրեր են արտագրել և հարազատ աղջիկների նման թաքցրել թշնամուց:

Այսպես է ծնվել հայկական ձեռագիր մատյանը, բացառիկ մի երևույթ համաշխարհային մշակույթում, ոչ միայն իր հնության և հարուստ բովանդակության առումով, այլև այն տեղով, որ զբաղեցրել է ժողովրդի կյանքում, այն դերով, որ խաղացել է նրա պատմության մեջ:

Ծագման պահից իսկ մատյանը եղել է ոչ թե պարզապես տեղեկությունների մի համագումար՝ գրված մագաղաթի թերթերի վրա, ոչ միայն գրագիտության, մշակույթի տարածման, միջոց, այլ եղել է սուր, որով ժողովուրդը պայքարել է հանուն իր ազատության և ազգապահպանության:

Կիմ ԲԱԿՇԻ
«Արծիվ և սուր» գրքից



ված են, և դրանք այսօր սկզբնաղբյուրի իրավունք են ձեռք բերել: Եվկլիդեսի երկրաչափությունը հայերեն ավելի վաղ է թարգմանվել, քան լատիներեն, և այն էլ ոչ թե արաբերենից, այլ հունարեն բնագրերից:

Մատենադարանի ձեռագրերում կան փիլիսոփայության և իրավունքի, մաթեմատիկայի և աշխարհագրության վերաբերյալ մատյաններ: Գիտական երկերը պարունակում են ապագա հայտնագործությունների հունդեր: Բանաստեղծությունները և միջնադարյան զրույցներն ապշեցնում են թարմությամբ և վերածննդի կենսասիրությամբ: Հին հայկական մանրանկարները փայլում են ոսկով, որդան կարմիրով, լաջվարդով, դրանք նման են թանկարժեք ջնարակի:

Ահա քարացած մի մատյան, որ հայտնաբերվել է քարանձավում: Կրաքերը դարերով լվացել են ձեռա-

Գիտություն
Գլխավոր խմբագիր՝ Ա. ՏԵՐ-ՂԱԲԻԵԼՅԱՆ
Երևան-19, Մարշալ Բաղդամյան 24բ,
հեռ. 56-80-14, 077 31 63 76
Դասիչ՝ 69268, գրանցման վկայական՝ 448:
Ստորագրված է տպագրության՝ 28.03.2019 թ.:
"ГИТУЙОН" ("Найка") газета НАН РА